Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

39.5
39.
2(075)
Ա-15

ԴԱՍԱՏԵՍՐ ԿՐՕՆԻ

Գ. ՏԱՐԻ

„Եւ ուսուսջիք որդւոց ձերոց խօսել զնոսա ի նստել ի տան և ի գնալ ի ճանապարհի և ի ննջել և ի յառնել“։ Մովս. ժա. 19.

ՀԱՄԱՉԱՅՆ ԾՐԱԳՐԻ ՀՈԳԵՒՈՐ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ

Կազմեց

ՍԱՀԱԿ ՔԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆՑ

(Արիաքան Մաղնուոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ)

Յարմար է կրօնուսոյցներին մեծի տակ ունենալ իմ «Դասատիրք կրօնի» հատոր II. մասն ա. եւ բ.

ԹԻՖԼԻԶ
ՅՈՎՀԱՆՆԵԻ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
1892

ИНСТИТУТ ... СССР
2(075)
Ա-15

2010

(075)
-15

ԴԱՍԱՏԵՍՐ ԿՐՕՆԻ

Գ. ՏԱՐԻ

„Եւ ուսուսջիք որդւոց ձերոց խօսել զնոսա ի նստել ի տան և ի գնալ ի ճանապարհի և ի ննջել և ի յառնել“: V Մովս. ժա. 19.

ՀԱՄԱՁԱՅՆ ԾՐԱԳՐԻ ՀՈԳԵՒՈՐ ԻՐԱԽԱՆՈՒԹԵԱՆ

Կազմեց

ՍԱՀԱԿ ՔԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆՑ

(Միաբան Մողնւոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ)

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА

Ցարմար է կրօնուսոյցներին մեռքի տակ ունենալ իմ «Դասագիրք կրօնի» հատոր II. մասն ա. եւ բ.

ԹԻՖԼԻԶ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
1892

Ь 2001

Дозволено цензурою, Тифлисъ, 29 Августа 1892 года.
Типографія И. Мартиросіанца, Орбел. ул. д. № 1—2

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна
36111-66

ՀՐԱՄԱՆԱՒ

ՏԵՂԱԿԱԼԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԲԱՐՁՐ ՍՐԲԱԶԱՆ ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՊՈՍԻ

692-Ա.Հ.

§ 1.

ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ

Մի մարդ ունէր երկու որդի։ Փոքրն ասաց Հօրը. «Հայր, տուր ինձ իմ բաժինը քո ունեցուածից»։ Հայրը բաժանեց նրան իւր ունեցածը։ Շատ օր չանցած՝ փոքր որդին առաւ իւր բաժինը և գնաց հեռու աշխարհ ու այնտեղ իւր ունեցածը վատնեց՝ անառակ կեանք վարելով։

Երբ բոլորը կերաւ, վերջացրեց, հէնց այն ժամանակ այն երկրումն էլ սաստիկ սով ընկաւ։ Նա սկսեց մուրացկանութեամբ ապրել։ Վերջը գնաց այն երկրի քաղաքացիներից մինի մօտ ծառայութեան մտաւ։ Նա էլ ուղարկեց իւր հանդը, որ խոզեր արածացնէ։ Փոքր որդին գոհ կլինէր, եթէ խոզերի կերած կերակուր էլ ունենար, բայց այդ էլ չկար։

Նա սկսաւ մտածել և ինքն իրան ասել. «Քանի՞ վարձկաններ իմ հօր տանը հաց են

ուտում, իսկ ես այստեղ սովամահ կորչում եմ. կգնամ հօրս մօտ և կասեմ նրան—Հայր, ես մեղաւոր եմ քո և Աստուծու առաջ. այլ ևս արժանի չեմ քեզ որդի կոչուելու, ընդունիր ինձ իբրև քո վարձկաններից մինը:

Փոքր որդին վերկացաւ և եկաւ հօր մօտ: Հայրը նրան հեռուից նկատեց. գթաշարժուեց. առաջ վազեց. վզովն ընկաւ և համբուրեց: Որդին ասաց. «Ես մեղաւոր եմ քո և Աստուծու առաջ. այլ ևս արժանի չեմ քեզ որդի կոչուելու»: Հայրն ասաց իւր ծառաներին. «Հանէք սրա հին շորերը և նորը հագցրէք. մատանին դրէք մատին. ոտներին կօշիկներ հագցրէք. մսացու եղը մորթեցէք. ուտենք և ուրախանանք, որովհետև իմ այս որդին մեռած էր, կենդանացաւ, կորած էր, գտնուեց»: Ամենքն էլ սկսան ղուարճանալ:

Մեծ որդին հանդումն էր: Երբ տուն դարձաւ՝ երգելու և պարելու ձայներ լսեց: Ծառաներից մինին կանչեց իւր մօր և հարցրեց, թէ այդ ինչ է: Նա էլ պատասխանեց. «Եղբայրդ դարձել է. քո Հայրը մսացու եղը մորթել տրուաւ նրա գալստեան պատճառով և ահա ամենքն ուրախանում են»:

Սա բարկացաւ և ներս չէր կամենում մտնել, բայց Հայրը դուրս եկաւ և աղաչում էր

նրան տուն գալ: Նա բարկացած պատասխան տուաւ հօրն ու ասաց. «Այս քանի՞ տարի է ծառայում եմ քեզ. քո խօսքից երբէք դուրս չեմ եկել, բայց ինձ մի ուլ էլ չտուիր, որ բարեկամներիս հետ ուրախանամ, իսկ այդ որդիդ, որ քո կայքը կերաւ, նրա համար մսացու եղն ես մորթել»:

Հայրն ասաց նրան. «Որդեակ, դու ամեն ժամանակ ինձ մօտ ես և այն ամենն ինչ որ իմս է, քոնն է. դու պէտք է ուրախանայիր, որովհետև քո եղբայրը մեռած էր, կենդանացաւ, կորած էր, գտնուեց»:

§ 2.

ՈՂՈՐՄԱԾ ՍԱՄԱՐԱՑՈՒ ԱՌԱԿԸ

«Յիսուս հետևեալ առակը պատմեց մի օրինականի:

Մի մարդ Երուսաղէմից գնում էր Երիքով քաղաքը և աւազակների ձեռն ընկաւ: Աւազակները մերկացրին անծանօթին. խոցոտեցին. կիսամահ թողին և գնացին:

Պատահմամբ մի քահանայ այդ ճանապարհովն անցկացաւ. տեսաւ նրան, բայց անցկացաւ, գնաց: Նոյն տեղովն անցկացաւ մի ղև-

տացի։ Նա ևս տեսաւ և անցաւ, գնաց։ Եկաւ մի սամարացի ճանապարհորդ. տեսաւ նրան և խղճաց. իջաւ դրաստից. մօտ եկաւ. վերքերը փաթաթեց. վրան ձէթ և գինի ածեց. դրաստի վրայ դրաւ. իջևան հասցրեց և հոգ տարաւ նրա վրայ։ Հետևեալ օրը, երբ պէտք է հեռանար, երկու դահեկան հանեց, իջևանի տիրոջը տուաւ և ասաց. «Խնամք տար և ինչ ծախս դրա համար անես, վերադարձիս կվճարեմ»։

Հիմա այն երեքից ո՞րն է երևում քեզ՝ թէ ընկերը է եղել աւազակների ձեռն ընկած մարդուն»։ Օրինականն ասաց. «Նա՝ որ ողորմութիւն արաւ՝ խղճաց»։ Այն ժամանակ Յիսուս ասաց. «Գնա՛, դու էլ այնպէս արա՛»։

§ 3.

ՈՐՈՄԻ ԱՌԱԿԸ

Յիսուս մի ուրիշ առակ էլ ասաց—երկնքի արքայութիւնը նմանէ մի մարդու, որ իւր արտումը բարի սերմը ցանեց։ Բայց երբ մարդիկ քուն եղան, թշնամին եկաւ ցորենի մէջ որոմներ ցանեց ու գնաց։ Երբ խոտը բուսաւ, պտուղ տուաւ, այն ժամանակ որոմներն էլ երևեցան։

Տան տիրոջ ծառաները մօտ եկան և ասացին. «Տէր, մի՞թէ դու քո արտումը բարի սերմը չցանեցիր, որոմները ո՞րտեղից են»։ Նա պատասխանեց և ասաց. «Այդ թշնամի մարդու արած է»։ Ծառաներն ասացին. «Կամենո՞ւմ ես, որ գնանք և դուրս հանենք»։ Նա պատասխանեց. «Ո՛չ, մի՞ գուցէ որոմները քաղելիս, ցորենն էլ նրանց հետ արմատախիլ անէք, թողէք որ երկուսն էլ միասին մեծանան մինչև հունձը, իսկ հնձի ժամանակ կասեմ հնձողներին՝ առաջ որոմները քաղեցէք և խուրձ կապեցէք՝ այրելու, իսկ ցորենը ժողովեցէք իմ ամբարի մէջ»։

§ 4.

ԱՅԳՈՒ ՄՇԱԿՆԵՐԻ ՍՈՒՆԿԸ

Երկնքի արքայութիւնը նման է մի տանուտէր մարդու, որն առաւօտանց վաղ դուրս եկաւ այգու համար մշակներ վարձելու։ Մշակների հետ օրը մի դահեկանի խօսելով՝ ուղարկեց իւր այգին։ Ժամը երեքի մօտ դուրս եկաւ, տեսաւ ուրիշ մշակներ, որոնք հրապարակում անգործ կանգնել էին և ասաց նրանց. «Դուք էլ գնացէք իմ այգին և ինչ որ արժան է, կտամ»։

նրանք էլ գնացին։ Դարձեալ հրապարակ դուրս եկաւ ժամը վեցին և ինչին ու նոյնպէս արաւ։ Ժամը տասն և մէկին մօտ՝ դուրս գալով ուրիշ մշակներ դտաւ պարապ կանգնած և ասաց. «Ի՞նչու էք այստեղ ամբողջ օրը պարապ կանգնել»։ Ասացին նրան. «Որովհետև մեզ ոչ ով չվարձեց»։ Այն ժամանակ ասաց. «Դուք էլ գնացէք իմ այգին և ինչ որ արժան է, կառնէք»։

Երեկոյեան՝ այգու տէրը վերակացուին ասաց.» Մշակներին կանչիր և վարձ տուր նրանց՝ յետիններից սկսած մինչև առաջինները»։ Ժամը տասն և մէկին եկողները մօտեցան և մի մի դահեկան ստացան։ Առաջին մշակներն էլ եկան և կարծում էին, թէ աւելի կստանան, բայց նրանք էլ մի դահեկան ընդունեցին։ Բայց երբ ստացան, տանտիրոջից տրտնջացին և ասացին. «Այդ յետինները մի ժամ գործեցին և դրանց էլ մեզ հետ հաւասար վարձատրեցիր. մենք ենք օրուայ տաքութիւնը և ծանրութիւնը քաշել»։ Նա էլ նրանցից մինին պատասխանեց և ասաց. «Ընկեր, չեմ զրկում քեզ. չէ՞ որ դու ինձ հետ մի դահեկանով համաձայնեցար. քո վարձն ա՛ռ և գնա՛. ես կամենում եմ որ այն յետինին էլ քեզ չափ տամ. կամ մթթէ ես իշխանութիւն չունեմ իմ ստացուածի հետ այնպէս վարուելու, ինչպէս իմ ցանկութիւնն է. ինչու ես նախանձում իմ առատաձեռնութեան վրայ»։

Այսպէս յետիններն առաջին կլինին, իսկ առաջինները յետին։

§ 5.

ՔԱՆՔԱՐՆԵՐԻ ՈՒԱԿԸ

Մի մարդ օտար երկիր էր գնում։ Կանչեց ծառաներին և իւր ունեցածը նրանց յանձնեց—մէկին հինգ քանքար տուաւ, միւսին՝ երկու, իսկ երրորդին՝ մի—իւրաքանչիւրին իւր կարողութեան համեմատ և շտապով հեռացաւ։

Հինգ քանքար ստացողը գործ գրաւ փողը և նրանով ուրիշ հինգ քանքար ևս շահուեց, նոյնպէս և երկու քանքար ստացողը գործ դրաւ և երկու քանքար ևս շահեցրեց։ Իսկ մի քանքար ստացողը գնաց գետինը փորեց ու տիրոջ քանքարը թաքկացրեց։

Մի քանի ժամանակից յետոյ վերադարձաւ ծառաների տէրը և նրանցից հաշիւ պահանջեց։ Հինգ քանքար ստացողը եկաւ և հինգ նոր քանքար ևս տիրոջը տալով՝ ասաց. «Տէ՛ր, դու ինձ հինգ քանքար տուիր, ահա՛ ուրիշ հինգ քանքար ևս աշխատել եմ դրանով»։

Տէրն ասաց նրան. «Զատ լաւ, բարի և հաւատարիմ ծառայ, որովհետև քիչ բանի մէջ հաւատարիմ գտնուեցար, շատ բաների վրայ կառավարիչ կնշանակեմ քեզ, եկ, մասնակից եղիր քո տիրոջ ուրախութեանը»։ Մօտ եկաւ երկու քանքար ստացողն և ասաց. «Ինձ երկու քանքար տուիր, տէր, ահա՛ ուրիշ երկուսը ևս շահել եմ դրանով»։ Տէրն ասաց նրան. «Զա՛տ լաւ, բարի և հաւատարիմ ծառայ, որովհետև քիչ բանի մէջ հաւատարիմ գտնուեցար, շատ բանի վրայ կառավարիչ կնշանակեմ, եկ, մասնակից եղիր քո տիրոջ ուրախութեանը»։

Մօտ եկաւ մի քանքար ստացողն և ասաց. «Տէր, ես գիտէի, որ դու խիստ մարդ ես, հնձում ես այնտեղից, ուր չես ցանել և հաւաքում ես, ուր չես փռել, ուստի վախեցայ քեզնից, գնացի և քո քանքարը գետնի մէջ թաքցրի—ահա՛ քեզ քո տուածը»։ «Չա՛ր և վատ ծառայ, երբ դու գիտէիր, որ ես հնձում եմ այն տեղից, ուր չեմ ցանել, և հաւաքում, ուր չեմ փռել, ինչու չյանձնեցիր իմ արծաթը սեղանաւորին, որ ես այժմ տոկոսով ստանայի նրանցից։ Ուրեմն առէ՛ք դրանից այդ քանքարը և տուէ՛ք տասն քանքար ունեցողին, իսկ այս անպիտան ծառային հանէ՛ք դրսի խաւարը, այնտեղ կլինի լացը և ատամների կրճտելը»։

§ 6.

ՄԵԾԱՏԱՆ ԵՒ ԱՂՔԱՏ ՂԱԶԱՐՈՍԻ ԱՌԱԿԸ։

Հարուստի մէկը հագնում էր ծիրանի և բեհեզ և ամեն օր փառաւոր կեանք էր վարում։ Մի աղքատ մարդ էլ կար՝ Ղազարոս անունով, որ հարստի դռանն ընկած էր՝ վէրքերով լիքը և կերակրւում էր նրա սեղանից թափուած փշրանքներով։ Շները գալիս և լիզում էին նրա վէրքերը։

Աղքատը մեռաւ։ Հրեշտակները տարան նրան Աբրահամի գոգը։ Հարուստն էլ մեռաւ ու թաղուեց։ Երբ սա դժոխքում տանջանքների մէջ աչքերը բաց արաւ և հեռուից տեսաւ Ղազարոսին Աբրահամի գոգում նստած՝ ասաց. «Հա՛յր Աբրահամ, ողորմի՛ր ինձ, ուղարկի՛ր Ղազարոսին. որ մատի ծայրը ջրով թաց անէ ու իմ պապակած լեզուն հովացնէ, որովհետև այս կրակի բոցերի մէջ տանջւում եմ»։ Աբրահամը պատասխանեց և ասաց. «Յիշի՛ր, որդեա՛կ, որ դու քո կենդանութեան ժամանակ վայելում էիր երկրային բոլոր բարութիւնները, իսկ Ղազարոսը չարչարւում էր. այժմ նա այստեղ մխիթարւում է, իսկ դու տանջւում ես։ Բացի դը-

բանից մեր և ձեր մէջ մեծ անդունդ կայ, այնպէս որ՝ ոչ մեր մօտից ձեր մօտ կարելի է անցնել, և ոչ ձեր մօտից մեզ մօտ գալ»։

Հարուստն ասաց. «Աղաչում եմ, Հայր, ուղարկիր Ղազարոսին մեր տուն. ես հինգ եղբայր ունիմ. թող գնայ և նրանց զգուշացնէ, որպէսզի նրանք էլ չգան այս տանջանքի տեղը»։ Աբրահամը պատասխանեց. «Նրանք ունին Մովսէս և մարգարէներ, թող նրանց լսեն»։ Հարուստը պատասխանեց. «Ո՛չ, Հայր Աբրահամ, եթէ մեռելներից մինը երթայ, նրանք անպատճառ կապաշխարեն»։ Աբրահամը կրկնեց. «Երբ Մովսէսին և մարգարէներին չեն լսում, եթէ մեռելներից մինը յարութիւն առնէ և նրանց մօտ գնայ, դարձեալ չեն հաւատալ»։

§ 7.

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Կրկնել (Ա. տարի երես 6 եւ ապա)

«Փառք ի բարձունս Աստուծոյ. և յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն։ Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս. օրհնեալ ես տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ։ Խոստովանիմք զքեզ և երկիրպագանեմք քեզ. փառաւորեմք

զքեզ. գոհանամք տէր զքէն վասն մեծի փառաց քոց։ Տէր Թագաւոր սուրբդ երկնային. Աստուած և Հայր ամենակալ։ Տէր և որդի Հօր միածին Յիսուս Քրիստոս և սուրբ որդի։ Տէր Աստուած գառն Աստուծոյ և որդի Հօր, որ առեր զմեղս իկուսէն։ Ողորմեցար. բարձեր զմեղս աշխարհի. և արդ ընկալ զաղաչանս մեր։ Սուրբդ որ նստիս ընդ աջմէ Հօր ողորմեաց մեզ։ Զի դու միայն սուրբ՝ դու միայն բարձրեալ ես՝ դու միայն տէր մեր Յիսուս Քրիստոս։ Տէր և Հոգիդ սուրբ՝ որ իփառս Աստուած ընդ Հօր. ամէն։

§ 8.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ

Ա – է ա ա – ն։ Հրէից Հերովդէս Թագաւորի ժամանակ մի քահանայ էր ապրում՝ անունը Զաքարիա։ Նրա կնոջ անունը Եղիսաբէթ էր։ Երկուսն էլ արդար էին և Աստուծու բոլոր պատուիրանները ճշտութեամբ էին կատարում։ Նրանք զաւակ չունէին և երկուսն էլ ծերացած էին։

Մի անգամ՝ երբ քահանայական պաշտօն կատարելու հերթը Զաքարիային հասաւ, տաճարը մտաւ խնկարկելու համար։ Ժողովուրդը

դուրսն աղօթում էր։ Խնկարկելու ժամանակ Հրեշտակն երևաց Զաքարիային. նա խիստ վախեցաւ։

Հրեշտակն ասաց. «Մի՛ վախենար, Զաքարիա՛, քո աղօթքը լսելի եղաւ. Եղիսաբէթ կինդ մի որդի կունենայ և նրա անունը Յովհաննէս կդնես. նա Աստուծու առաջ մեծ կլինի և իսրայէլի որդկերանցից շատերին դէպի ճշմարիտ Աստուածը կդարձնէ. նա կքարոզէ և Աստուծու համար ժողովուրդ կպատրաստէ»։

Զաքարիան պատասխանեց Հրեշտակին, ինչով պիտի իմանամ ես այդ բանը, որովհետև ես էլ, կինս էլ ծերացած ենք»։ Հրեշտակը պատասխանեց. «Ես Գաբրիէլն եմ, որ կանգնում եմ Աստուծու առաջ. ես ուղարկուած եմ քեզ հետ խօսելու և աւետելու. դու համր կմնաս մինչև այն օրը, երբ այս բոլորը կկատարուի, որովհետև ինձ չհաւատացիր»։
Ժողովուրդն սպասում էր Զաքարիային և զարմանում, որ նա այդքան ուշացաւ։ Երբ տաճարից դուրս եկաւ, այլ ևս չէր կարողանում խօսել։ Զաքարիան նշաններով էր խօսում ժողովրդի հետ և մնաց պապանձուած։ Պաշտօնի օրերն անցնելուց յետոյ վերադարձաւ տուն։

Ծ ն ո ւ ն դ։ Ժամանակը լրացաւ և Եղի-

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ЯЗЫКОЗНАНИЯ Академии Наук СССР

սաբէթը մի որդի ունեցաւ։ Երբ նրա դրացիները և ազգականները լսեցին, որ Աստուած մեծ ողորմութիւն է արել, շատ ուրախացան։ Եօթն օրից յետոյ պէտք է մանկանն անուն դնէին և կամենում էին Զաքարիա անուանել, բայց մայրն արգելում էր և ասում, թէ նրա անունը Յովհաննէս պէտք է լինի։ Բարեկամները պատասխանեցին նրան, որ քո արգականների մէջ ոչ ոք այդպիսի անուն չունի։ Վերջն ամենքն էլ հօրն ակնարկեցին, թէ նա ինչ անուն կտայ։

Այն ժամանակ թուղթ չկար. Զաքարիան մի տախտակ պահանջեց և նրա վրայ գրեց. «Յովհաննէս է սրա անունը»։ Իսկոյն լեզուն բացուեց, խօսում և օրհնում էր Աստուծուն։ Ամենքն էլ զարմանում էին այս բանի վրայ և ասում. «Ինչ պէտք է լինի այս մանուկը»։

Մանուկ Յովհաննէսն աճում էր և հոգւով զօրանում։ Նա անապատումն էր ապրում։

Բ ա ր ձ ր ա ն։ Աստուած հրամայեց անապատում ապրող Զաքարիայի որդի Յովհաննէսին Յորդանանի կողմերը գնալ և քարոզել։ «Ապաշխարեցէ՛ք զի մերձեալ է արքայութիւն երկնից», ասում էր ամենին Յովհաննէսը։ Նրա շորերը ուղտի բրդից էին, գոտիկը կաշիից, իսկ

ՄԵՍ ՍՍՌ ԳՐԱԴԱՐԱՆ ГСС Библиотека ՀՍՍՌ-Арм ССР

կերակուրը մարախ և վայրենի մեղր էր։ Յովհաննէսի մօտ էին գնում Երուսաղէմացիները, Հրէաստանի բոլոր ժողովուրդը, Յորդանանի կողմերից. խոստովանում էին իրանց մեղքերը և մկրտւում նրանից։

§ 9.

ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Կրկնել (տե՛ս Ա. տարի երես 14) եւ ասա

ԵՐԳ ՋՐՕՐՆԵԱՅ

Ո՞վ զարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ,
Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ՝
Կամէր մկրտիլ ի ծառայէն իւրմէ.
Զառնոյր Կարապետն զմկրտիլն ի յանձ։

Ո՞րքան զարմանալի է այս յայտնուած մեծ խորհուրդը-արարիչ Աստուածը Յորդանան գալով՝ կամենում էր մկրտուիլ իւր ծառայից։ Կարապետ Յովհաննէսը յանձն չէր առնում մկրտելը։

Յորդանան լուեալ փախստական դառնայր,
Վտակ առ վտակ պատգամաւոր լինէր.
Գետ մի՛ զարհուրիր, քո արարիչն եմ ես.
Եկեալ մկրտիմ եւ լուանամ զմեղս։

Յորդանանն այս բանը լսելով՝ փախչում էր, վտակը վտակին պատգամաւոր էր գնում (այս խորհուրդը յայտնելու համար)։ Գետ, մի՛ զարհուրիր, ես քո արարիչն եմ. եկել եմ, որ մկրտուիմ և լուանամ մեղքերը (ուրիշների)։

Այսօր ձայնն հայրական
Ցերկնից իջեալ հաճոյական
Սիրեցելոյ որդւոյ վկայն.
Ա՛յ յորդորէ,
Գետ յորդորէ,
Գետ Յորդանան։
Յորդորական ձայնիւ երգէր
Մեծ Կարապետն Յովհաննէս։

Այսօր հայր Աստուծու հաճութեան ձայնը լսւում է երկնքից և վկայում է իւր սիրելի Որդու մասին։ Ա՛յ, յորդորէ, գետ յորդորէ, գետ Յորդանան։ Յորդորական ձայնով էր երգում մեծ Կարապետ Յովհաննէսը։

§ 10.

ՅԻՍՈՒՍԻ ՏԱՃԱՐ ՏԱՆՈՒԻԼԸ

Քառասուն օրից յետոյ՝ Մովսէսի օրէնքին համաձայն, եթէ երեխան արու էր և անդրանիկ, ծնողները տանում էին Երուսաղէմ, նուիրում էին տաճարին և յետոյ զոհով յետ էին գնում։ Հարուստները բերում էին գառը, իսկ աղքատները մի զոյգ տատրակ կամ աղաւնի։

Յիսուսի ծնողներն աղքատ էին, դրա համար էլ մի զոյգ աղաւնի տարան։

Այդ միևնոյն ժամանակում Երուսաղէմում բնակւում էր մի մարդ, որի անունն էր Սիմէօն։

Այս մարդն արդար էր և աստուածավախ։ Նա Սուրբ Հոգուց իրաւունք ունէր չմեռնել մինչև որ խոստացեալ Մեսսիային այսինքն Յիսուս Քրիստոսին տեսնէ։ Երբ մանուկ Յիսուսին տաճար բերին, Սուրբ Հոգւոյ ազդմամբ նա ևս եկաւ այնտեղ. մանկանը դիրկն առաւ. օրհնեց և ասաց. «Տէր, այժմ կարող եմ մեռնել, որովհետև ես տեսայ այն Փրկիչը, որին դու պատրաստել ես բոլոր ազգերի համար»։ Ծնողները զարմանում էին ծերունու խօսքերի վրայ։ Սիմէօնն օրհնեց մանուկ Յիսուսին և Մարիամին։

Տաճարում կար մի այրի կին՝ Աննա անունով. նա մարգարէուհի էր, 84 տարեկան. տաճարից ոչ մի ժամանակ չէր հեռացել. իւր օրերը ծոմով և աղօթքով էր անցկացնում ու գիշեր ցերեկ ծառայում էր Աստուծուն։ Երբ սա մանուկ Յիսուսին տեսաւ, շնորհակալութիւն արաւ Աստուծուն և պատմում էր ամենին. որ նա տեսել էր խոստացեալ Մեսսիային։

—

Ամենայն տարի փետրուար ամսի 14-ն տօնում ենք Յիսուսի տաճարին ընծայուիլը։ Տօնի անունն է տեառնընդառաջ, որովհետև Սիմէօն ծերունին Յիսուսի (Տիրոջ) առաջ դուրս եկաւ։

ՏԱՂ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ

Քրիստոս փառաց Թագաւոր,
Այսօր եկեալ յնծայումն՝
Կատարելով նա զօրէնս
Քառասնօրեայ զալստեամբն։

Փառքի Թագաւոր Քրիստոսը կատարելով օրէնքը, եկաւ տաճարին ընծայուելու՝ քառասնօրեայ հասակում։

Զոր մարգարէն Եսայի
Ցառաջագոյն դուշակեաց
Երուսաղէմ քաղաքին,
Սիմէօնի ծերունւոյն։

(Այն), որ մարգարէն առաջուց գուշակեց Երուսաղէմ քաղաքին, Սիմէօն ծերունուն։

§ 11.

ՅԻՍՈՒՍ ՄՏՆՈՒՄ Է ԵՐՈՒՍԱՂԷՄ

Յիսուս Բեթանիայից Երուսաղէմ դարձաւ։ Երբ Զիթենեաց լերան մօտեցաւ, աշակերտներից երկուսին ուղարկեց և ասաց. «Գնացէք գիւղը, որ ձեր առաջևն է, այնտեղ կգտնէք մի կապած էշ, արձակեցէք և բերէք։ Աշակերտները գնացին և այնպէս արին, ինչպէս որ Յիսուս հրամայել էր—բերին էշը և իրանց հանդերձները վրան ձգեցին։ Յիսուս նստեց նրա

վրայ։ Ժողովրդից շատերն իրանց հանդերձները ճանապարհի վրայ փռեցին, շատերն էլ ծառից ճիւղեր էին կտրում ու ճանապարհի վրայ փռում։

Երբ Յիսուս Զիթենեաց լերան գագաթին մօտեցաւ, բոլոր աշակերտներն սկսեցին փառաբանել Աստուծուն այն ամենի համար, ինչ որ տեսել էին։ Ժողովրդից շատերը, որոնք տօնի պատճառով էին եկել, երբ տեսան, որ Յիսուս Երուսաղէմ է գնում, արմաւենու ճիւղեր վեր առան և դուրս եկան նրա առաջ։ Երբ Յիսուս մօտեցաւ քաղաքին, ասաց. «Երուսաղէմ, Երուսաղէմ, երանի դու գոնէ այսօր գդայիր, թէ որն է քո օգուտը, բայց այդ բանը դու չես տեսնում։ Կգան օրեր, երբ քո թշնամիները քո չորս կողմդ պատնէշներով կպատեն. քեզ հիմնայատակ կանեն. որդիքդ քո մէջ կկոտորեն ու չեն թողնիլ, որ քո միջումը քարը քարի վրայ կանգէ»։

Ժողովուրդը որ առաջևից և ետևից գընում էր, աղաղակում էր և ասում. «Ո՞վսաննա Դաւթի որդուն, օրհնեալ է տիրոջ անունով եկող թագաւորը, ո՞վսաննա բարձրումը»։ Եւ երբ Երուսաղէմ մտաւ, ամբողջ քաղաքը շարժուեցաւ. ամեն ոք հարցնում էր. «Ո՞վ է սա»։ Ժո-

ղովուրդը պատասխանում էր. «Սա Յիսուսն է՝ Նազարէթի մարգարէն»։

—

Այդ օրը կոչւում է Ծաղկազարդ և տօնում են Զատկից մի շաբաթ առաջ՝ կիւրակէ օրը։ Այդ օրը եկեղեցում կանաչ ճիւղեր են բաժանում, որ յիշեցնում է նախկին Զիթենին և արմաւենին։

ԶԱՐԱԿԱՆ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ

Յորժամ եկն Յիսուս յԵրուսաղէմ ի քաղաքն, ընդ առաջ ելին ծերք ոստովք ձիթենեաց եւ զԱստուածորդին փառաւորէին։

Երբ Յիսուս Երուսաղէմ՝ քաղաքն եկաւ, ծերերը նրա առաջ դուրս եկան՝ ձեռներին բռնած Զիթենու ճիւղեր և փառաւորում էին Աստուծու որդուն (Յիսուսին)։

Ի լեռնէն Զիթենեաց տարածանէին մանկունք զհանդերձս իւրեանց, եւ ոստս ի ծառոց բերեալ մատուցանէին, Աստուածորդւոյն՝ սուրբ Թագաւորին։

Զիթենեաց լեռնից սկսած երբայեցւոց մանուկները իրանց հանդերձները փռում էին ճանապարհի վրայ. ծառերից ճիւղեր էին կտրում և մատուցանում էին Աստուածորդուն՝ սուրբ Թագաւորին (Յիսուսին)։

Ոստովք եւ տերեւեալ ձիթենեաց, երբայեցւոց մանկունքն օրհնէին, ուրախ լե՛ր Երուսաղէմ քաղաք եւ ցնծա՛ Սիոն՝ մայր եկեղեցի։

Եբրայեցւոց մանուկները ոստերով, տերևազարդ ձիթենիներով օրհնում էին և ասում. «Ուրախացիր, Երուսաղէմ քաղաք և ցնծա՛ մայր եկեղեցի Սիոն։

§ 12.

ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ

Կրկնել Յիսուսի խաչելութիւնը (տես Բ. տարի, երես 29) ապա

Երբ Պիղատոսը հաստատեց հրէաների վըճիռը, զինուորները հանեցին Յիսուսի կարմիր քղամիտը և հագցրին իւր շորերն ու տարան խաչելու։ Յիսուս ինքն էր տանում իւր խաչափայտը։

Երբ եկան այն տեղը, որ գագաթն էր կոչւում, եբրայեցերէն Գողգոթա, Յիսուսին քացախ խմացրին՝ լեղիի հետ խառնած։ Յիսուս ճաշակելուց յետոյ՝ չէր կամենում խմել։ Նրա հետ խաչեցին երկու չարագործների էլ—մինին աջ, իսկ միւսին ձախ կողմում։ Ժամը երեքն էր, որ Յիսուսին խաչեցին։ Յիսուսն ասաց. «Ների՛ր դրանց, Հա՛յր, որովհետև իրանք էլ չը գիտեն, թէ ինչ են անում»։ Պահապանները նստել էին այնտեղ և պաշտպանում էին։ Պիղատոսը մի տախտակ կախել տուաւ խաչի վերևից։ Տախտակի վրայ գրած էր—Յ ի ս ո ւ ս Ն ա զ ո վ ր ե ց ի Թ ա գ ա ւ ո ր Հ ր է ի ց։ Այս

տախտակը հրէաներից շատերը կարդացին։ Այն ժամանակ քահանայապետներն ասացին Պիղատոսին. «Մի՛ գրիր Թագաւոր հրէից, գրի՛ր որ ինքն էր ասում, թէ Թագաւոր եմ հրէից»։ Պիղատոսը պատասխանեց. «Ինչ որ գրեցի, գրեցի»։

Զինուորները ծաղր էին անում նրան և ասում. «Եթէ դու ես հրէից Թագաւորը, փրկի՛ր քո անձը»։ Անցուդարձ անողները հայհոյում էին նրան և գլուխները շարժելով՝ ասում էին. «Ով տաճարը կանգնող և երեք օրում շինող, ազատի՛ր քեզ, եթէ Աստուծու որդի ես և իջի՛ր խաչից»։

Այսպէս էլ քահանայապետներն էին անում դպիրների և ծերերի հետ միասին ու ասում. «Ուրիշներին ազատեց, ինքն իրան չէ կարողանում ազատել. թէ որ նա իսրայէլի Թագաւորն է, թո՛ղ իջնէ խաչից և հաւատանք նրան»։

Խաչուած չարագործներից մինը հայհոյում էր նրան և ասում. «Եթէ դու ես Քրիստոսը, փրկի՛ր քո անձն էլ, մեզ էլ», Իսկ միւսը սաստելով՝ պատասխանեց նրան և ասաց. «Դու չե՞ս վախենում Աստուածանից, չէ՞ որ ինքդ էլ նոյն պատժի մէջն ես»։

Կանայք ևս կային, որոնք հեռուանց մտիկ էին տալիս։ Յիսուսի խաչի մօտ կանգնած էին նրա մայրը, մօրաքոյրը և Մարիամ մակթաղե-

նացին։ Յիսուսը տեսնելով իւր մօրը և այն աշակերտին, որին սիրում էր, ասաց. «Ահա քո մայրը։ Եւ այն ժամանակից սկսած աշակերտն իրան մօտն առաւ Մարիամին։

Ժամը 6-ն խաւար իջաւ բոլոր երկրի վրայ-արևը խաւարեց։ Ժամը ինների դէմ Յիսուսը մեծ ձայնով աղաղակեց և ասաց. «Աստուած իմ, Աստուած մի, ինչու թողիր ինձ»։ Սրանից յետոյ Յիսուսն ասաց. «Ծարաւ եմ»։ Զինուորներից մինը վերցրեց սպունգը. թաթախեց քացախի մէջ և մշտկի ծայրին դրած՝ նրա բերանին մօտեցրեց։

Երբ Յիսուս քացախը ճաշակեց, ասաց. «Ամենայն ինչ կատարուած է»։ Յիսուս մի անգամ էլ խօսեց՝ ասելով. «Հայր, հոգիս քո ձեռն եմ աւանդում»։ Այս ասելով՝ խոնարհեցրեց գլուխը և հոգին աւանդեց։ Իսկոյն արևը խաւարեց. տաճարի վարագոյրը երկու կտոր եղաւ՝ վերևից մինչև ներքև. երկիրը շարժուեց. ժայռերը պատառուեցան և գերեզմանները բացուեցան։ Հարիւրապետը և պահապանները, երբ տեսան շարժը և այն ամեն եղածներն, ասացին. «Ճշմարիտ որ սա Աստուծու որդի էր»։ Ժողովուրդը, որ այս տեսարանը դիտելու համար եկել էր, եղած բաները տեսնելով՝ կուրծքները ծեծում էին և յետ դառնում։

ՀԱՐԱԿԱՆ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ

Ո՞վ սքանչելի եւ տեսիլ ահաւոր-զարարիչն երկնի եւ երկրի այսօր տեսանի ի խաչին։

Սքանչելի՜ և զարհուրելի՜ տեսարան—երկնքի և երկրի Արարչին այսօր խաչի վրայ տեսանք։

Տեսեալ զտէրն ի խաչին, խաւարեցաւ արեգակն եւ վարագոյր տաճարին ցելոյր վերուստ մինչեւ ի վայր։

Տիրոջը խաչի վրայ տեսնելով՝ արեգակը խաւարեց, իսկ տաճարի վարագոյրը վերևից մինչև վայր պատառուեց։

Անարգաբար խաչեցաւ տէրն ի մէջ անօրինաց. զի լցցի զիրն որ ասէր, թէ ընդ անօրէնս համարեցաւ։

Անպատիւ ձևով խաչուեցաւ տէրը երկու աւազակների մէջ, որպէսզի կատարուի (մարգարէի) գրածը, «թէ անօրէնների կարգը դասուեցաւ»։

§ 13.

ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄՆ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Կրկնել Յիսուսի թաղումն և յարութիւնը (տես Բ. տարի երես 14, 16 և ապա

ՀԱՐԱԿԱՆ ԹԱՂՄԱՆ

Պարգեւատուն ամենեցուն
Այսօր խնդրի պարգեւս ի Պիղատոսէ.

Եւ արկողն զլոյս որպէս զօթոց
Հաւանի պատիլ ի Յովսէփայ։

Ամենին պարգև տուողն այսօր ինքը որպէս պարգև է խնդրում Պիղատոսից և նա, որ լոյսն իբրև հանդերձ ունէր հագած, յանձն է առնում Յովսէփից պատանուիլ։

§ 14.

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ

Կրկնել Յիսուսի համբարձումն (տե՛ս Բ. տարի երես 18 ապա

ՁԱՐԱԿԱՆ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ

Համբարձաւ տէրն մեր յերկինս՝
Ասելով աշակերտացն՝
Նստարուք ի քաղաքիդ Երուսաղէմ՝
Մինչեւ զգենուցուք զզօրութիւն ի բարձանց։

Մեր տէրը երկինք համբարձաւ՝ ասելով աշակերտներին. «Երուսաղէմ քաղաքում մնացէք» մինչև վերևից (երկնքից) զօրութիւն (Ս. Հոգւոյ շնորհը) ստանալը։

Միաբան եալ սուրբ առաքեալքն
Միախորհ եւ միակրօն
Միաբան նստէին ի սուրբ վերնատանն
Եւ ակն ունէին գալստեան սուրբ հոգւոյն.

Սուրբ առաքեալները մի սիրտ մի հոգի դառած՝ վերնատանը նստած՝ սպասում էին սուրբ Հոգւոյ գալստեանը։

Յանկարծակի եհաս
Ինմանութիւն լուսոյ փայլման
Եւ եկեալ բնակեցաւ ի սուրբ առաքեալսն
Մինչդեռ նստէին ի սուրբ վերնատան։

Լուսոյ փայլի նման յանկարծ եկաւ (Ս. Հոգին) և դադարեց առաքեալների մէջ, երբ որ նրանք վերնատանն էին նստած։

§ 15.

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

Կրկնել հոգեգալուստ (տես. Բ. տարի երես 19)

ՁԱՐԱԿԱՆ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ

Առաքելոյ աղաւնոյ
Իջանելով մեծածայն հնչմամբ 'ի բարձանց
Ինմանութիւն լուսոյ փայլման հրազինեաց
զանկիզելի զաշակերտսն
Մինչդեռ նստէին ի սուրբ վերնատան։

Ուղարկուած աղաւնին վերևից մեծ աղմուկով իջաւ. նա, որպէս լուսոյ փայլ, առանց այրելու՝ հրազինեց աշակերտներին, երբ որ վերնատանը նստած էին։

---

§ 16.

Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅ

Կարճ ժամանակուայ մէջ հաւատացեալների թիւն այնքան բազմացաւ, որ առաքեալներն այլ ևս չէին կարողանում հոգ տանել նրանց, ուստի ընտրեցին իրանց համար եօթն օգնականներ կամ սարկաւագներ։ Դրանցից մինն էր Ստեփաննոսը։

Ստեփաննոսը մի շնորհալի մարդ էր, այնպէս էր քարոզում Քրիստոսի աւետարանը, որ ամենի սիրտը գրաւում էր և Քրիստոսին հետևող էր դարձնում։ Հենց դրա համար էլ շատերը նախանձեցին և նրան հակառակ էին խօսում, բայց Ստեփաննոսը հոգւոյն սրբոյ շնորհքով լցուած՝ ամենին էլ յաղթում էր։ Թշնամիները երբ տեսան, որ խելքով նրան չեն կարողանում յաղթել, սկսեցին ուրիշներին սովորցնել, սուտ վկաներ գտան՝ որպէս թէ նրանք լսել են Ստեփաննոսից, որ ասել է, թէ Նազովրեցի Յիսուսը կքանդէ Երուսաղէմի տաճարը և Մովսէսի օրէնքները կփոխէ։

Ստեփաննոսին ատեան տարան և այս բանի համար դանգատեցին նրանից։ Քահա-

նայապետը հարցրեց. «Ինչ որ քեզ վրայ ասում են, ճիշտ է արդեօ՞ք»։ Ստեփաննոսը գեղեցիկ կերպով խօսեց և ցոյց տուաւ, որ ինքը Աստուծու և նրա ծառայ Մովսէսի օրէնքները սիրում և կատարում է, ընդհակառակն իրանք են Աստուծու օրէնքները չկատարողը և սրտով էլ շատ հեռի են նրանից։

Այս բանի վրայ խիստ բարկացան և սկսեցին ատամները կրճտացնել։ Ստեփաննոսն՝ ամենևին չէր վրդովւում—խաղաղ, հանգիստ էր. նրա երեսին նայողը կկարծէր թէ հրեշտակ լինի։ Ստեփաննոսը երկինք նայեց և յետոյ ասաց. «Ահա՛ ես տեսնում եմ երկինքը բացուած և Յիսուս Քրիստոս Հայր Աստուծու աջ կողմում նստած»։

Այս որ լսեցին, ականջները խցեցին, բարձր ձայնով սկսեցին աղաղակել և յարձակուիլ Ստեփաննոսի վրայ։ Նրան դուրս տարան քաղաքից, շորերը հանեցին և դրին մի ջահիլ մարդու ոտների տակ, որի անունն էր Սաւուղ։ Յետոյ ամեն մինը մի-մի քար վեր առան և սկսեցին Ս. Ստեփաննոսին խփել՝ քարկոծ անել։

Այս քարկոծելու ժամանակ Ս. Ստեփաննոսն աղօթք էր անում իւր թշնամիների համար և ասում. «Տէր Յիսուս, ա՛ռ իմ հոգին, մեղք մի՛ համարիր սրանց արածը»։ Այս խօսքերն ա-

ցաց և մեռաւ։ Ս. Ստեփաննոսի քարկոծմանը Սաւուղն էլ մասնակից էր։

Այսպէս Ս. Ստեփաննոսն առաջինը (նախ) եղաւ, որ արիւն թափեց՝ վկայութիւն տուաւ, թէ Յիսուս Քրիստոսն Աստուծու որդի է և դրա համար էլ նախավկայ անունն ենք տալիս։

—

Ս. Ստեփաննոս նախավկայի տօնը կատարում ենք դեկտեմբերի 26։

§ 17.

ՍԱՒՈՒՂԻ ԴԱՐՁԸ.

Քրիստոսին հաւատացողների թիւը քանի գնում աւելանում էր և որքան աւելանում էր, այնքան էլ նրա թշնամիներն էին բազմանում։ Դրանցից նշանաւոր է մինը, որի անունը Սաւուղ էր։ Այս այն Սաւուղն է, որ Ս. Ստեփաննոսի սպանմանն էլ մասնակից էր։ Սա Երուսաղէմում մտնում էր տները, ուր որ Քրիստոսին հաւատացող էր գտնում, խսկոյն իշխանութեանն էր մատնում։ Նա սրանով չբաւականացաւ, գնաց քահանայապետի մօտ, իրաւունք խնդրեց. որ Դամասկոս քաղաքը գնայ և եթէ

այնտեղ էլ հաւատացեալներ գտնէ, կապած Երուսաղէմ ուղարկէ։

Դամասկոսին չհասած՝ յանկարծ երկնքից լոյս փայլատակեց։ Սաւուղը երեսի վրայ ընկաւ։ Երկնքից ձայն եկաւ, որ ասում էր. «Սաւուղ, Սաւուղ ինչու ես ինձ հալածում»։ Սաւուղը հարցրեց. «Ո՞վ ես, Տէր»։ Ձայնը պատասխանեց. «Ես այն Յիսուսն եմ, որին դու հալածում ես, բայց վեր կաց. գնա՛ քաղաք. այնտեղ կիմանաս, թէ ինչ պիտի անես»։ Նրա հետ գնացող մարդիկը լուռ ու մունջ կանգնած էին, ձայնը լսում էին, բայց ոչինչ չէին տեսնում։ Սաւուղը տեղից վեր կացաւ, բայց ոչինչ չէր տեսնում։ Նրա ձեռից բռնած՝ տարան Դամասկոս։ Նա այնտեղ քանի մի օր մնաց առանց ուտելու և խմելու։

Դամասկոսում բնակւում էր Քրիստոսի աշակերտներից մինը՝ որի անունն էր Անանիա։ Աստուած ասաց նրան տեսիլքում. «Անանիա՛»։ Նա պատասխան տուաւ և ասաց. «Այստեղ եմ, Տէր»։ Տէրն ասաց. «Վեր կաց և գնա՛ այն փողոցը, որ կոչւում է ուղիղ. այնտեղ Յուդայի տանը հարցրու Տարսոնացի Սաւուղին, նա դեռ ևս աղօթք է անում»։ Անանիան պատասխան տուաւ և ասաց. «Այդ մարդու մասին շատերից եմ լսել, որ քեզ հաւատացողներին չարչարում

է Երուսաղէմում. այժմս էլ քահանայապետից իրաւունք է ստացել այստեղ գալ և շղթայով կապել նրանց, որոնք քեզ հաւատում են»: Աստուած ասաց նրան. «Գնա, նա իմ ընտրութեան անօթն է. նա կվկայէ իմ մասին և կքարոզէ հեթանոսներին, թագաւորների և իսրայէլի որդւոց առաջ»:

Անանիան գնաց Յուդայի տուն, ձեռը դրէ-խին դրաւ և ասաց. «Սաւուղ եղբայր, վերև մտիկ տուր, այն Յիսուսը, որ ճանապարհին քեզ երևաց, նա ուղարկեց ինձ քեզ մօտ, քո աչքերը բժշկեմ, որ սուրբ հոգւով լցուես»: Սաւուղի աչքից իսկոյն վայր ընկաւ կեղևանքի նման մի բան. սկսաւ տեսնել. մկրտուեց. հաց կերաւ և կազդուրուեց: Սրանից յետոյ մի քանի օր Դամասկոսում մնաց Յիսուսի աշակերտների մօտ:

Սաւուղը քարոզում է Յիսուսի մասին. Սաւուղը միւս օրն սկսաւ քարոզել Յիսուս Քրիստոսի մասին: Նա՝ որ եկել էր հալածելու հաւատացեալներին, ինքը հաւատացեալ է դարձել: Լսողները զարմանում էին և ասում. «Սա այն մարդը չէ, որ եկել էր Յիսուսի անունը տուողին կապէ և քահանայապետի մօտ ուղարկէ»: Սաւուղը և՛ս աւելի զօրանում էր և քարոզում Դամասկոսում: Դամասկոսացիք չէին կա-

րողանում նրան պատասխան տալ, ուստի վրճռեցին, որ սպանեն: Քաղաքի դռների մօտ պահապաններ էին նշանակել, որ չփախչէ: Այս բանն իմացան Յիսուսի աշակերտները—գիշերով քաղաքի պարսպից վայր թողին և փախցրին:

Սաւուղը դարձաւ Երուսաղէմ և եկաւ առաքեալների մօտ: Ոչ ոք չէր ուզում հաւատալ, թէ նա Յիսուսի աշակերտ է դառել: Աշակերտներից մինը, որի անունը Բառնաբաս էր, պատմեց առաքեալներին Դամասկոսի ճանապարհին պատահածը և այն՝ թէ ինչպէս Սաւուղը քարոզել է նոյն քաղաքի ժողովրդին: Այնուհետև Սաւուղը համարձակ կերպով քարոզում էր Երուսաղէմի մէջ Նազովրեցի Յիսուսի մասին: Հրէաները շատ բարկացան և մտները դրին սպանել նրան: Բայց առաքեալները խորհուրդ տուին նրան հեռանալ Տարսոն քաղաքը:

§ 18.

ՍԱՆԴՈՒԽՏ ԿՈՅՍ

Կրկնել Թադէոս եւ Բարդուղիմէոս (տե՛ս Բ. տարի երես 27)

Ս. ՍԱՆԴՈՒԽՏ ԿՈՒՍԻ ՁԱՐԱԿԱՆԸ

Քեզ պարծի այսօր սուրբ եկեղեցի
Ո՛վ վկայուհի սուրբ Սանդուխտ.

Որ զհայրականն քո Թողեր զպաշտօն
Վասն Քրիստոսի հեղեր զարիւն քո սուրբ։

Ո՛վ վկայուհի Ս. Սանդուխտ, քեզանով այսօր պարծենում է Ս. եկեղեցին, որովհետև Թողեցիր հայրական աթոռի մեծութիւնը և Քրիստոսի համար քո սուրբ արիւնը Թափեցիր։

Աշակերտեցար առաքելոյն Թադէի
Եւ ի հաւատս ճշմարիտս հաստատեցար՝
Ոչ խառնելով ընդ հեթանոսական պաշտօնս՝
Արժանի եղեր վերանալ առ Հայր

Թադէոս առաքեալին աշակերտուհի դարձար. (նրա ձեռքով) ճշմարիտ հաւատի մէջ հաստատուեցար. մերժեցիր հեթանոսութիւը և արժանացար երկինք գնալու՝ Հայր Աստուծու մօտ։

§ 19.

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԽՈՐ ՎԻՐԱԳ ՄՏՆԵԼԸ

Կրկնել Ս. Գրիգոր Լուսաւորիչ յօդուածի համապատասխան հատուածը (տե՛ս Բ. տարի երես 34) եւ ապա

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՁԱՐԱԿԱՆԸ

Պարակից հոգեղինաց երկնային զօրացն
Սրբասնեալ զզեստուք տէր Գրիգորիոս,
Ի խոր վիրաբին իջեր ի տղմին ի մէջ դառնաշունչ օձիցն,
Զի փրկեսցես զմեզ ի չար վիշապէն։

Հայաստանցիներիս հաւատոյ Հայր, Ս. Գրիգորիոս, ճգնողական վարքովդ ընտրեցիր հեղինակ. սուրբ մարմնովդ սրունքները կոճղի մէջ արիւնաքամ արիր, որպէսզի մեզ հաստատես հաւատոյ վիմի վրայ։

§ 20.

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԽՈՐՎԻՐԱԳԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ

Կրկնել Ս. Գրոգոր Լուսաւորիչ յօդուածի համապատասխան հատուածը (տես Բ. տարի երես 38) եւ ապա

Հայաստանեաց հայր հաւատոյ հեղինակ ընտրեալ
Ճգնողական վարուք, տէր Գրիգորիոս,
Ի կոճեղս ոլորեալ, հոսեալ յարենէ սրունք սրբասնեալ մարմնոյդ՝
Հաստատելով զմեզ ի վեմն հաւատոյ։

Մաքուր զգեստաւորուած հոգեղէնների՝ երկնային զօրքերի պարակից, տէր Գրիգորիոս, դու ի-ջար դառնաշունչ օձերով լիքը Խորվիրաբի տղմի մէջը, որպէսզի մեզ փրկես չար վիշաբիցը (սատանայից)։

Զանն Աստուծոյ տեսանող բարի
Արժանացեալ շնորհիւ, տէր Գրոգորիոս,
Կործանիչ բազնեաց, քակտիչ մեհենեաց
զօրութեամբ խաչին
Քահանայապետ ընտրեալ Աստուածային յայտնութեամբ։

Աստուծու շնորհիւ նրա տան կառավարիչ լինելու արժանացած, տէր Գրիգորիոս. խաչի զօրութեամբ բագինների կործանող, մեհանների քանդող. աստուածային յայտնութեամբ ընտրեալ քահանայապետ։

§ 21.

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ ԵՒ ՄԵՍՐՈՎԲ ՄԱՇՏՈՑ

Սուրբ Գրիգոր Լուսաւորչից յետոյ կաթողիկոսութիւն էին անում նրա ժառանգները։ Լուսաւորչի տան վերջին ժառանգն էր Ս. Սահակ Պարթեւը։ Սա շատ իւելօք մարդ էր, առաքինի և բարեպաշտ։ Թէև ամբողջ Հայաստանը վաղուց քրիստոնեայ էր, բայց հայերէն սեփական գիր չունենալու պատճառով՝ քրիստոնէութիւնը ժողովրդի համար անհասկանալի էր մնում։ Եկեղեցիներում սուրբ գիրքը կարդացուում էր կամ յունաց կամ ասորւոց լեզուով։ Նոյն լեզուներով էր լինում և ժամերգութիւնը։ Սուրբ Սահակը շարունակ մտածում էր այս մասին և աշխատում էր հայերէն գիր գտնել։

Սուրբ Սահակի ժամանակ կար և մի ուրիշ մարդ, որ նոյնպէս շատ էր մտածում հայերէն գիր գտնելու մասին—այդ մարդն էր սուրբ Մեսրովբը։ Սա գիւղացու որդի էր, ընդունակ, աշխատասէր. լաւ գիտէր յունաց, ասորւոց և պարսից

լեզուները։ Ս. Մեսրովբը շատ էր սիրում Ս. Սահակին և երբ նա կաթուղիկոս դարձաւ, սա էլ վարդապետ դարձաւ։

Ս. Մեսրովբը վարդապետ դառնալով քարոզում էր ամեն տեղ և սուրբ Աւետարանը մեկնում էր ժողովրդին հասկանալի լեզուով այսինքն հայերէն։ Բոլոր վարդապետներն այդ միևնոյնը չէին կարողանում անել, որովհետև չգիտէին ոչ յունաց և ոչ ասորւոց լեզուները։

Այս բանին մի ճար անելու համար Ս. Սահակի խորհրդով հայոց Վռամշապուհ ուսումնասէր թագաւորը մի ժողով արաւ Վաղարշապատում ուսումնական մարդկանցից։ Այստեղ Վռամշապուհն ասաց, որ ինքը լսել է, թէ Դանիել անունով մի ասորի եպիսկոպոսի մօտ կան հայերէն տառեր։ Ժողովը մարդ ուղարկեց Դանիել եպիսկոպոսի մօտ և բերել տուաւ տառերը, բայց որովհետև այդ տառերը քիչ էին, նրանցով չկարողացան հայոց լեզուի բոլոր հնչիւնները արտայայտել։ Սրանից յետոյ Ս. Մեսրովբը գնաց շատ երկրների գիտնականների մօտ և աշխատեց նրանց օգնութեամբ հայոց տառեր գտնել, բայց այդ բոլոր աշխատանքն ի զուր անցաւ, ոչ ոք չկարողացաւ օգնել նրան։

Տ — ե ր ի գ ի — ա ը։ Մարդկանցից յոյսը

կտրած, ուզեց ջերմեռանդ կերպով աղօթք անել և խնդրել Աստուծուն, որ օգնէ իրան Հայերէն տառեր գտնելու։ Այդ ժամանակ Ս. Մեսրովբը այնքան էր մտածում տառերի մասին, որ էլ ուրիշ ոչինչ չէր լսում և չէր տեսնում։ Նա ոչ արթուն էր և ոչ քնած։ Եւ ահա այդ դրութեան մէջ նրան մի ձեռք երևաց և գրեց տառերը։ Այդ տառերի ձևը Ս. Մեսրովբ մըտքումը պահեց և սթափուելուց յետոյ՝ տախտակի վրայ նշանակեց։

Երբ Ս. Սահակը և Վռամշապուհը լսեցին, որ Մեսրովբը գտել է տառերը և գալիս է, դուրս եկան նրա առաջը մեծ բազմութիւնով. պատուով ընդունեցին նրան և բերին Վաղարշապատ պաղաքը։

Տառերը գտնելուց յետոյ Ս. Սահակը և Մեսրովբը Վռամշապուհի օգնութիւնով սկսեցին բազմաթիւ ուսումնարաններ բաց անել և սովորցնել Հայերէն տառերով գրել և կարդալը։ Եկեղեցիներում ժամերգութիւնը Հայերէն էր լինում և աւետարանը Հայերէն կարդացւում։ Ժողովուրդը, որ մինչև այժմ եկեղեցի գնալով բան չէր հասկանում, այժմ խիստ ուրախ էր։

Բացի դրանից Ս. Սահակը Հայերէն լեզուով գրեց շատ շարականներ՝ եկեղեցում երգելու համար. նա յօրինեց շարականների ութը

եղանակները, որ մինչև հիմա էլ երգում ենք մեր եկեղեցում։

ՉԱՐԱԿԱՆ Ս. ՍԱՀԱԿԱՅ

Որ յարմատոց հարցն սրբոց մեզ գաւազան բղխեցեր. զԽսահակ սուրբ հայրապետն եկայք վերապատուեսցուք։

(Տէր), դու սուրբ հայրերի, ցեղից Ս. հայրապետ Սահակին մեզ հովուող գաւազան տուիր, (ժողովուրդ), եկէք վերապատուենք նրան։

Որ զխաւարն անգիտութեան Հայաստանեայց լուծեր, զիմաստութեան ծագեալ զլոյս սովաւ որդւոցս Թորգոմայ։

Դու Հայաստանցիներիս տգիտութեան խաւարը փարատեցիր և նրա (Ս. Սահակի) միջոցով Թորգոմայ որդւոց համար իմաստութեան լոյսը ծագեցիր։

Որ զհանդերձեալ խորհուրդ քո, տէր, տեսլեամբ սրբոյն ծանուցեր, յիշատակի սորա ընկալ զտօնողաց զաղաչանս։

Տէր, դու որ քո ապագայ խորհուրդները տեսլեան միջոցով յայտնեցիր այն սրբին, մեր՝ սրա յիշատակը տօնողների աղաչանքը լսիր։

§ 22.

ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐ

Քանի որ Հայոց ուսումնարանների թիւը շատանում էր և եկեղեցում Հայերէն էին կարդում և երգում, այնքան էլ յոյների նախանձը

աւելի էր շարժւում. նրանք ուզում էին, որ առաջուայ նման էլի իրանց՝ յունաց լեզուով կարդան և երգեն հայոց եկեղեցիներում:

Այդ ժամանակ Հայաստանը բաժանուած էր երկու մասնի—մի մասը պարսիկների իշխանութեան տակն էր և նրանց էր հարկ տալիս, իսկ միւս մասը՝ յոյների: Ընայելով որ հարկ էին տալիս, բայց ամեն մի մասնի թագաւորը հայ էր լինում:

Այդ ժամանակ յունաց մասնի Հայաստանում յոյները չէին թողնում ոչ ուսումնարան բաց անել և ոչ էլ եկեղեցիներում հայերէն կարդալ և երգել: Սրա համար Ս. Սահակը նամակ գրեց յոյների կայսրին, որ նստում էր Կոստանդնուպոլիս քաղաքում և նրանց պատրիարքին ու խնդրեց, որ նրանք էլ թոյլ տան իրանց մասնի Հայաստանում ուսումնարաններ բանալ՝ Հայերէն սովորցնելու և եկեղեցիներում հայերէն ժամերգութիւն անելու համար: Այդ ժամանակները Ս. Սահակը նամակ տուաւ Ս. Մեսրովբին և իւր թոռն Վարդան Մամիկոնեանին և ուղարկեց նրանց Կ. Պոլիս: Նրանց հետ ուղարկեց շատ ընծաներ յունաց կայսեր և ուրիշ մեծամեծներին, որ սրանով նրանց սիրտը շահէ:

Յունաց կայսրը սիրով ընդունեց Ս. Մեսրովբին և Վարդանին ու կատարեց Ս. Սահակի խնդիրը:

Դրանից յետոյ յունական մասումն էլ բացուեցան շատ ուսումնարաններ, որտեղ սովորցնում էին հայերէն, իսկ եկեղեցիներում ժամերգութիւնը լինում էր հայ լեզուով:

Ս. Սահակը և Մեսրովբը իրանց յառաջադէմ աշակերտների հետ թարգմանեցին Սուրբ գիրքը և ուրիշ շատ գրքեր: Յառաջադէմ աշակերտներին ուղարկում էին այն ժամանակուայ մեծ քաղաքները, որ այնտեղ լաւ սովորեն յունաց, ասորւոց լեզուները: Սրանք ուսումն աւարտելուց յետոյ Հայաստան դարձան և ուսումնարաններում իրանց սովորածը աշակերտներին էին սովորցնում. նոր գրքեր էին գրում և թարգմանում և կամ քահանայ, վարդապետ, եպիսկոպոս դառնալով՝ Հայաստանի զանազան քաղաքներն ու գիւղերն էին գնում և սովորցնում, քարոզում էին ժողովրդին: Ոչ մի ժամանակ Հայաստանն այնքան առաջ չէր գնացել և լուսաւորուել, ինչպէս այժմ: Ոչ մի ժամանակ այնքան գրքեր չէին գրուել ու թարգմանուել, ինչպէս Ս. Սահակի, Մեսրովբի և նրանց աշակերտների օրերում:

ՁԱՐԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ

Որ զգիտութիւն քո զերկնային եւ զնոգեւոր իմաստութիւն առատապէս ծաւալեցեր յեկեղեցիս Հայաստանեայց 'ի

ձեռն սրբոց Թարգմանչաց, աղաչանօք սոցա ողորմեա՛ մեզ Աստուած։

Աստուած, դու որ քո երկնային գիտութիւնը և հոգևոր իմաստութիւնը առատօրէն տարածեցիր Հայոց եկեղեցիներում սուրբ Թարգմանիչների ձեռքով, սրանց խնդրքովը ողորմիր մեզ։

§ 23.

ԱՏՈՎՄԵԱՆՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ

Վռամշապուհի մահուանից յետոյ Հայոց Թագաւորութիւնը շուտով վերջացաւ և մեր երկիրը դարձաւ Հարկատու պարսիկ Թագաւորներին։

Այդ ժամանակ Պարսկաստանում իշխում էր Յազկերտ II-ը։ Այս Թագաւորը կամենում էր Հայաստանը նուաճել և բոլոր Հայերին էլ իրան ծառայ դարձնել։ Իւր այս միտքը յաջողցնելու համար մտածեց, որ քրիստոնէութիւնը ջնջէ մեր երկրից, որովհետև նա ասում էր—քանի որ Հայերը ուրիշ կրօն ունին, մեզ հետ չեն միանայ. հենց որ նրանց կրօնը փոխենք և ստիպենք, որ նրանք էլ մեզ նման արև և կրակ պաշտեն, այն ժամանակ միայն Հայերը մեր ծառաները կդառնան և նրանց երկիրն էլ մերը կլինի։ Դրա համար Յազկերտը պարսիկ իշ-

խանների և մոգպետների հետ խորհուրդ արաւ, թէ ինչ ձևով սկսեն և գլուխ հանեն այս գործը։ Որոշեցին որ Թագաւորն իրանց Հարևան հոնաց դէմ պատերազմ սկսէ և իւր իշխանութեան տակ եղող Հայ իշխանների հետ պատերազմ գնայ, որպէսզի զօրքի և իշխանների հեռանալովը՝ մնացած Հայ ժողովուրդը վախենայ և Յազկերտի հրամանին չկարողանայ հակառակել։

Ձուտով Հայաստան հրաման ուղարկեցին։ Հայ իշխանները զօրքերն առան և պարսկաստան գնացին։ Սրանց հետ միացան պարսիկ զօրքերն էլ և հոնաց դէմ անցան։ Երկու տարի շարունակ կռուեցին։ Բայց ոչինչ չկարողացան անել։ Մենակ Հայերը չէին որ պարսիկներին օգնում էին հոնաց դէմ, էլի ուրիշ շատ քրիստոնեայ ազգեր կային։ Պատերազմից յետոյ հին զօրքերին իրանց երկիրներն ուղարկեց, իսկ նրանց տեղ նորերը բերել տուաւ։

Այսպէս եօթը տարի շարունակեց։ Այս ժամանակուայ մէջ իւր մօտ եղող քրիստոնեայ իշխաններին մի քանիսին փող էր բաշխում, մի քանիսին պատիւ էր խոստանում և յորդորում էր, որ պարսից կրօնն ընդունեն։ Բայց իզուր, որովհետև ոչ ոք կրօնափոխ չեղաւ։

Յազկերտը երբ տեսաւ, որ Հայերն այս

միջոցով իրանց կրօնը չեն փոխում, այլտնի հրամանը հանեց, որ եւ իշխանութեան տակ եղող քրիստոնեաները հաւատներն ուրանան և արևին ու կրակին երկրպագութիւն տան: Իւր մօտ եղող քրիստոնեայ զօրքերին նորից հոնաց դէմ պատերազմի տարաւ, և շատ չարչարեց ճանապարհին: Պատերազմը վերջանալուց յետոյ չթողեց, որ իրանց երկիրը դառնան, այլ զանազան տանջանքներ տալով՝ նորից ստիպեց հաւատներն ուրանալ: Ատովմ Գնունի և մի քանի հայ իշխաններ, երբ տեսան Յազկերտի արածները, զօրքն առան ու Հայաստան փախան, բայց պարսիկները նրանց ետևից հասան և ամենին էլ կոտորեցին: Սրանք չմոռացան իրանց պապերի կրօնը և ամենքն էլ մեռան ու մարտիրոսներ՝ նահատակներ դարձան:

Այս նահատակութիւնը Ատովմ իշխանի անունով կոչւում է Ատովմեանց նահատակութիւն: Եկեղեցեն սրանց համար առանձին տօնէ սահմանել և ամենայն տարի տօնում է, բուն բարեկենդանի առաջին շաբթում:

Դենշապուհ, Միհրներսեհ հազարապետի նամակը հայերի պատասխանը: Յազկերտը մնացած հայ իշխաններին չթողեց, որ Պարսկաստանից յետ դառնան Հայաստան: Դենշապուհ անունով մի

պարսիկ իշխան մեր երկիրն ուղարկեց, որ հայ ժողովրդին թագաւորի կամացը հնազանդեցնէ: Սա եկաւ, երեսանց խաղաղութիւն էր ցոյց տալիս, իսկ ծածուկ աշխատում էր հայ իշխաններին, որոնք հայաստանումն էին մնացել, միմեանց հետ կռուացնել: Հարկ դրաւ եկեղեցիների վրայ. սովորական հարկերը կրկնապատիկ աւելացրեց և այսպէս կամաց-կամաց Հայաստանը տկարացնում էր:

Պարսիկները տեսան, որ այս տեսակ բաներով էլ չեն կարողանում հայերին իրանց հաւատից թիլացնել, ուստի ուրիշ բան մտածեցին: Միհրներսեհ հազարապետը մոգպետի խորհրդով հայերի մեծամեծներին մի նամակ գրեց, որի մէջ ցոյց էր տալիս, որ արևապաշտութիւնը, կրակապաշտութիւնը ճշմարիտ կրօն է, իսկ քրիստոնէութիւնը՝ մեր կրօնը սխալ է: Միհրներսեհը հրամայեց որ կամ այս նամակի պատասխանը գրեն և՛ կամ Պարսկաստան գան թագաւորի մօտ:

Հայոց Յովսէփ կաթողիկոսը, երբ այս նամակն ստացաւ, կանչեց գլխաւոր եպիսկոպոսներին և շատ քահանաների. Արտաշատ քաղաքում ժողով արաւ և Միհրներսեհ հազարապետի նամակին պատասխան գրեց: Այս պատասխանի մէջ հաստատում էին, որ պարսիկների

կրօնը սխալ է, քրիստոնէականն է ճշմարիտը։ Նամակն այսպիսի խօսքով վերջացրին»։ Այս հաւատին մենք ամենքս էլ հաստատուն ենք, նրա համար պատրաստ ենք մեռնել—քո սուրը՝ մեր պարանոցը։

Հայոց իշխանները գնում են Պարսկաստան։ Երբ այս նամակը կարդացին, Յազկերտը և պարսիկ իշխանները խիստ զարմացան, թէ ինչպէս հայերը համարձակ և անվերկիւղ իրանց կրօնը պաշտպանում են։ Յազկերտը կատաղեց և մոգպետի խորհրդովը հայոց նախարարներին իւր մօտ կանչեց։ Դրանց թուումն էր սպարապետ Մամիկոնեանը և Սիւնեաց իշխան Վասակը, որ պարսիկների կողմից Հայաստանի վրայ կառավարիչ էր նշանակուած։ Հայոց նախարարները թէև գիտէին Յազկերտի միտքը, բայց որովհետև իրանց ազգականներից շատերը Պարսկաստանում նեղութեան մէջ էին, կարծում էին, թէ իրանց գնալովը կազատեն նրանց, դրա համար էլ վեր կացան և գնացին։ Բայց գնալուց առաջ խաչ ու աւետարանի վրայ երդում կերան Յովսէփ կաթողիկոսի առաջ, որ իրանց կրօնին հաւատարիմ կմնան։

Առաջ՝ երբ հայոց նախարարները Պարսկաստան էին գնում, թագաւորը նրանց առաջ մարդ

էր ուղարկում և հարցնում էր Հայաստանի որպիսութեան մասին, բայց այս անգամ Յազկերտը սովորական պատուով չընդունեց—մարդ չուղարկեց նրանց առաջ, այլ բարկացած խօսեց նրանց հետ և ասաց, որ եթէ վաղը իւր հետ արևին երկրպագութիւն չտան, ամենքն էլ խիստ կպատժուեն։ Նա ասաց, որ զօրք կուղարկէ Հայաստան և նախարարների ընտանիքն ու բոլոր հայերին կոտորել կտայ։ Հայ նախարարները պատասխանեցին և ասացին. «Մեր սուրը հաւատը չենք կարող մոռանալ, ինչ տանջանք էլ կուզես, տուր»։ Այս պատասխանի վրայ Յազկերտը խիստ բարկացաւ և հրամայեց, որ ամենին էլ բանտարկեն։ Հայ նախարարները շատ վող տուին պարսիկ իշխաններին, որ ազատուեն և իրանց երկիրը դառնան, բայց հնար չեղաւ։ Այնուհետև ամենքն էլ յոյսերը միայն Աստուծու վրայ դրին։

Հայոց նախարարները երկոսնայ արքունական քրիստոնեական ենթարկեցին։ Յազկերտը հայ նախարարներին բանտարկելուց յետոյ՝ զօրք պատրաստեց որ հայերին հեռու երկրներ քշէ, որպէսզի անտէր, անիշխան մնացած հայերին իւր կամքը կատարել տայ։ Պարսիկ իշխաններից մէկը, որ ծածուկ քրիստոնեայ էր, գիտէր այս բանը, ուստի եկաւ և

կրօնը սխալ է, քրիստոնէականն է ճշմարիտը։ Նամակն այսպիսի խօսքով վերջացրին»։ Այս հաւատին մենք ամենքս էլ հաստատուն ենք, նրա համար պատրաստ ենք մեռնել—քո սուրը՝ մեր պարանոցը։

Հայոց իշխանները գնո՞ւմ են Պարսկաստան։ Երբ այս նամակը կարդացին, Յազկերտը և պարսիկ իշխանները խիստ զարմացան, թէ ինչպէս հայերը համարձակ և աներկիւղ իրանց կրօնը պաշտպանում են։ Յազկերտը կատաղեց և մոգպետի խորհրդովը հայոց նախարարներին իւր մօտ կանչեց։ Դրանց թուումն էր սպարապետ Մամիկոնեանը և Սիւնեաց իշխան Վասակը, որ պարսիկների կողմից Հայաստանի վրայ կառավարիչ էր նշանակուած։ Հայոց նախարարները թէև գիտէին Յակերտի միտքը, բայց որովհետև իրանց ազգականներից շատերը Պարսկաստանում նեղութեան մէջ էին, կարծում էին, թէ իրանց գնալովը կազատեն նրանց, դրա համար էլ վեր կացան և գնացին։ Բայց գնալուց առաջ խաչ ու աւետարանի վրայ երդում կերան Յովսէփ կաթողիկոսի առաջ, որ իրանց կրօնին հաւատարիմ կմնան։

Առաջ՝ երբ հայոց նախարարները Պարսկաստան էին գնում, թագաւորը նրանց առաջ մարդ

էր ուղարկում և հարցնում էր Հայաստանի որպիսութեան մասին, բայց այս անգամ Յազկերտը սովորական պատուով չընդունեց—մարդ չուղարկեց նրանց առաջ, այլ բարկացած խօսեց նրանց հետ և ասաց, որ եթէ վաղը իւր հետ արևին երկրպագութիւն չտան, ամենքն էլ խիստ կպատժուեն։ Նա ասաց, որ զօրք կուղարկէ Հայաստան և նախարարների ընտանիքն ու բոլոր հայերին կոտորել կտայ։ Հայ նախարարները պատասխանեցին և ասացին. «Մեր սուրը հաւատը չենք կարող մոռանալ, ինչ տանջանք էլ կուզես, տո՛ւր»։ Այս պատասխանի վրայ Յազկերտը խիստ բարկացաւ և հրամայեց, որ ամենին էլ բանտարկեն։ Հայ նախարարները շատ վոգ տուին պարսիկ իշխաններին, որ ազատուեն և իրանց երկիրը դառնան, բայց հնար չեղաւ։ Այնուհետև ամենքն էլ յոյսերը միայն Աստուծու վրայ դրին։

Հայոց նախարարները երբեմն ազատո՞ւմ են քրիստոնէութիւնը։ Յազկերտը հայ նախարարներին բանտարկելուց յետոյ՝ զօրք պատրաստեց որ հայերին հեռու երկրներ քշէ, որպէսզի անտէր, անիշխան մնացած հայերին իւր կամքը կատարել տայ։ Պարսիկ իշխաններից մէկը, որ ծածուկ քրիստոնեայ էր, գիտէր այս բանը, ուստի եկաւ և

Հայ նախարարներին յայտնեց Թագաւորի միտքը և խորհուրդ տուաւ, որ երեսանց նրա հրամանը կատարեն՝ մինչև բանտից կազատուեն, իրանց երկիրը դառնան, իսկ նրանից յետոյ էլի կարող են ազատ կերպով քրիստոնեայ լինել: Նա ասաց՝ որ սրանով միայն կարող է՛ք դուք ազատուել և ձեր անտէր մնացած ժողովրդին պաշտպանել—նրանք առանց ձեզ իրանց հաւատն ու երկիրը չեն կարող պաշտպանել:

Հայ նախարարները հաւանեցին պարսիկ իշխանի տուած խորհրդին և որոշեցին երեսանց կատարել Թագաւորի հրամանը, իսկ երբ Հայաստան կդառնան, նորից դիմադրեն Յազկերտին: Վարդան Մամիկոնեանն սկզբում հակառակ էր այս բանին, բայց վերջը համաձայնեց:

Թագաւորին յայտնեցին, որ Հայ իշխանները պատրաստ են նրա կամքը կատարելու: Յազկերտը չափից դուրս ուրախացաւ. նախարարներին պատիւներ տուաւ, մի դունտ զօրք և 700-ից աւելի մոգ և մոգպետներ ուղարկեց Հայաստան, որպէսզի Հայերին կրակ պաշտելը սովորցնեն: Թագաւորը պատուիրեց, որ բոլոր եկեղեցիները քանդեն և նրանց տեղ կրակատուններ շինեն և քրիստոնէութեան անունը ջնջեն Հայաստանից: Սիւնեաց Վասակ իշխանի և մի քանի ուրիշ իշխանների որդւոց պատանդ

պահեցին Պարկաստանում, որպէսզի Հայերն իրանց տուած խօսքից յետ չկանգնեն:

Սիւնեաց Վասակ իշխանի ուրացութիւնը: Պարսկաստանի Հայ նախարարների մօտ քահանաներ էլ կային: Սրանք, երբ իմացան նախարարների ուրացութիւնը, խիստ տրտմեցան. հեռացան նրանցից. իրանցից մինին առաջուց Հայաստան ուղարկեցին, որ այս ուրացութիւնն իմաց տայ ամենին: Հայաստանի եպիսկոպոսներն ու քահանաները, երբ լսեցին նախարարների ուրացութիւնը, խորհուրդ արին և որոշեցին, որ ամեն միջոց գործ դնեն և թոյլ չտան ուրացեալներին Հայաստան մտնելու: Որոշեցին նոյնպէս որ ոչ մի ուրացողի չխնայեն—ոչ ազգականի, ոչ եղբօր, ոչ հօր, ուստի և այս նպատակով թէ՛ մարդիկ և թէ՛ կանայք զէնք առան և պատրաստ սպասում էին:

Հայ նախարարները պարսից զօրքի հետ նոյեմբեր ամսին Հայաստան հասան: Մի ամսի չափ հանգստանալուց յետոյ, մի կիւրակէ օր մոգպետը մոգերի հետ գնաց եկեղեցի և կամենում էր ժամերգութիւնը խանգարել: Ղևոնդ քահանան, որ ուրիշ շատ եկեղեցականների հետ եկեղեցում պաշտօն էր կատարում, խաչը ձեռին յարձակուեց մոգերի վրայ և թոյլ չտուաւ: Փո-

զովուրդն էլ փայտով վրայ ընկաւ և շատերի գլուխը կոտրելով՝ դուրս արին եկեղեցուց։ Մոգպետը զարհուրեց՝ իւր աչքով տեսաւ, թէ ինչքան հաստատ են հայերն իրանց հաւատին, ուստի յոյսը կտրեց այն բանից, թէ հնարաւոր է հայերին կրակապաշտ դարձնել։ Յետոյ Վասակ իշխանին իւր մօտ կանչեց, խիստ յանդիմանեց և ասաց. «Եթէ դու էս չես կամենում մեր կրօնն ընդունել, պարզ ասա ինձ, որպէսզի ես մեծ մոգպետին և Միհրներսեհին գրեմ, որ համոզեն Թագաւորին և թոյլ տան ձեզ ազատ կերպով ձեր կրօնը պաշտել։

Անօրէն Վասակը մի կողմից փառասիրութեան համար, միւս կողմից, երբ յիշում էր, որ իւր որդիքը պատանդ են Պարսկաստանում, եթէ քրիստոնեայ մնայ, նրանց կսպանեն, այս պատճառով էլ սրտանց ուրացել էր իւր հաւատը։ Նա աշխատեց շատ քաղցր խօսքերով համոզել մոգպետին, որ հանդստանայ։ Ինքն էլ Սիւնեաց երկրից շատ զօրք բերել տուաւ, որ Թագաւորի հրամանը ուժով կարողանայ կատարել տալ։ Վասակն այսպէս սկսեց իւր գործը — մի քանիսին փող էր տալիս, մի քանիսին փառք և պատիւ էր խոստանում, որ կրակ պաշտեն, իսկ մոգելին էլ նախարարների տներն ուղարկեց և

և այսպիսով աշխատում էր կրակապաշտութիւնը տարածել։

Վասակ իշխանը գերի է ընկնում։ Եպիսկոպոսները երբ տեսան Վասակի արած չարութիւնները, հայոց բանակի ուրացեալներին և քրիստոնէութեան հաւատարիմ մնացողներին իրարուց բաժանեցին. ժողով արին. Վարդան սպարապետին և միւս հաւատարիմ իշխաններին կանչեցին և ասացին. «Եթէ Վասակի արածներին դուք էլ հաւանում էք, առաջ մեզ սպանեցէք և յետոյ ինչ ուզում էք, այն արէք, իսկ եթէ նրա արածներին չէք հաւանում, պէտք է պատժել նրան»։ Իշխաններն ամենքն էլ Աստուծուն վկայ կանչեցին, մի սիրտ, մի հոգի դարձան և պատրաստուեցան ուրացեալ Վասակի դէմ գնալ ու նրա չարութիւններին վերջ դնել։ Այս բանին մէկը միայն չհաւանեց. իսկոյն միւսները վրայ ընկան և տեղն ու տեղն քարկոծ արին ու սպանեցին։ Այս բանը միւսների վրայ մեծ ազդեցութիւն արաւ։

Հայ իշխաններն առաջ գնացին։ Պատերազմում Վասակը գերի ընկաւ շատերի հետ. եկաւ եպիսկոպոսների ոտներն ընկաւ. երդում կերաւ և խոստացաւ քրիստոնէական կրօնին հաւատարիմ մնալ։ Եպիսկոպոսները ներեցին։

Վասակի գունդը ցրուելուց յետոյ Հայոց զօրքը յարձակուեց այն բերդերի վրայ, որտեղ պարսիկ զօրք և մոգեր կային։ Առան այդ բերդերը և մոգերից մի քանիսին սպանեցին. մի քանիսին փախցրին և կրակատուններն էլ կործանեցին։ Այս բոլոր պատերազմների մէջ Աստուած յայտնի կերպով օգնում էր Հայերին։

Վասակի դրածները։ Սիւնեաց Վասակ իշխանը նորից սկսեց իւր սրտի մէջ ծածկուած չարութիւնը յայտնել և Հայաստանը տակն ու վրայ անել—մոռացաւ իւր խոստումը, որ արել էր խաչի և աւետարանի վրայ։ Զատ ամուր բերդեր կործանեց. գիւղեր այրեց. նախարարների ընտանիքներ բռնեց և իւր երկրի բերդերի մէջ դրաւ. եկեղեցիները քանդեց և քահանաներին բանտ դրաւ։

Վարդանն այդ ժամանակ Հայաստանում չէր։ Վասակի չարութիւններն իսկոյն Վարդանին գրեցին և յայտնեցին, որ շատ նախարարներ միաբանել են Սիւնեաց իշխանի հետ։ Այս լուրն առնելուն պէս՝ Վարդանն իսկոյն Հայաստան դարձաւ։ Վասակը՝ երբ լսեց Վարդանի գալը՝ գիշերով փախաւ իւր երկիրը։

Բայց որովհետև ձմեռը վրայ էր հասել և Վարդանը պաշար չունէր բոլոր զօրքը իւր մօտ

պահելու, այս պատճառով նրանց մեծ մասը իրանց տեղերն ուղարկեց և խիստ հրաման տուաւ, որ գարնան իւր մօտ ժողովեն։ Իսկ իւր մօտ պահած զօրքերից շատ գնտեր Վասակի երկիրն ուղարկեց, որոնք շատ տեղեր քար ու քանտ արին և ուրացեալներին այնքան նեղը ձգեցին, որ կերակուր չունէին, սատկած իշի և ձիու միս էին ուտում։

Որպէսզի պարսից թագաւորի սիրտը շարժեն և ստիպեն նրան մի ձևով իւր մտքից ձեռք վերցնել. գերի բռնուած մի պարսիկ իշխան կանչեցին, եղած վնասները և Վասակի արածները մէկ մէկ պատմեցին նրան և Պարսկաստան ուղարկեցին, որ գնայ և Յազկերտին այս բոլորը պատմէ։ Յազկերտը, երբ այս մարդուց Հայաստանի նեղ վիճակն իմացաւ, այնպէս ցոյց տուաւ՝ որպէս թէ ցաւում է. նեղութեան մէջ եղող քրիստոնեաներին հրամայեց ազատութիւն տալ. պատուիրեց, որ թոյլ տան իրանց կրօնը համարձակ կերպով պաշտել. քահանաներին էլ ասաց, որ եկեղեցիների մէջ քրիստոնէական պաշտօն կատարեն։ Նամակ գրեց Հայաստան, ասաց որ ամենին էլ ներեն և կատարեալ ազատութիւն տան։ Այս բոլոր կարգադրութեան միտքն էր Հայերին երեսանց հանդարտացնել, իսկ ծածուկ իւր պատրաստու-

թիւնն էր տեսնում։ Բայց երբ տեսաւ, որ Հայերն իրա միտքը հասկանում են և չեն խաբւում, այն ժամանակ զէնքի զօրութեամբ՝ այժով կամեցաւ ստիպել Հայերին, որ թողնեն իրանց հաւատը։ Սրա համար մեծ զօրք պատրաստել տուաւ. Մեհրներսէհին էլ նրանց վրայ զօրապետ նշանակեց և մեր երկիրն ուղարկեց։

Վարդանայ Պատերազմ։ Մեհրներսեհը զօրքն առած Հայաստան եկաւ. Վասակին իրա մօտ կանչեց և բոլոր գործերը նրան յանձնեց։ Վասակն էլ ժողովեց այն նախարարներին, որ իւր մօտն էին, նրանց զօրքը իւր զօրքի հետ միացրեց և Սիւնիքի բնակիչներին ստիպեց կրակապաշտ դառնալ

Վարդան սպարապետը յոյսն Աստուծու վրայ դրաւ և պատրաստուեցաւ նրանց դէմ գնալու։ Այն նախարարները, որոնք իւր հետ համաձայն էին 66.000 զօրք հաւաքեցին. գընացին թշնամու դէմ և բանակ ձգեցին Արտազ դաշտում, որտեղ մի ժամանակ Սանդուխտ կոյսը նահատակուեց։ Այստեղ եկաւ Յովսէփ կաթողիկոսը և Ղևոնդ քահանան ուրիշ շատ քահանաների հետ, որպէսզի նրանք էլ իրանց կողմից այս հոգևոր պատերազմին մասնակցեն։

Վասակը և պարսից իշխանները երբ տեսան, որ հայ նախարարները միաբանուել են, վախեցան նրանց զօրութիւնից, սկսեցին նորից սուտ-սուտ երդումներ անել, որ իրարից բաժանեն, բայց իզուր — այս անգամ էլ ոչ ոք չհաւատաց նրանց։

Երկու կողմերն էլ պատրաստ կանգնած են իրարու դէմ ու դէմ Տղմուտ գետի ափին, որ անցնում է Արտազ դաշտի միջով։ 451 թուի Հոգեգալստեան օրն էր։ Ս. Ղևոնդը պատարագ արաւ Ս. Յովսէփի հրամանով, ճառ խօսեց և և ոգևորուեց ամենին։ Զօրքը հաղորդուեց և և պատերազմի պատրաստուեց։ Ս. Ղևոնդից յետոյ Վարդան սպարապետը խօսեց և ոգևորեց, որ քաջութեամբ կռուեն։

Վարդանը հայոց զօրքը չորս մասնի բաժանեց և յարձակուեց իրանից չորս անգամ աւելի՝ պարսիկ զօրքի վրայ։

Ս. Վարդանը երկար ժամանակ քաջութեամբ պատերազմեց և ընկաւ՝ ընդունելով մարտիրոսական պսակ։ Թէև Վարդանը մեռաւ, բայց պատերազմը մինչև երեկոյ շարունակուեց — յաղթութիւնն անորոշ մնաց։ Այս պատերազմի մէջ հայերի կողմից ընկան 1036 հոգի, իսկ պարսիկներից 3544 հոգի։

Այսպէս մեր պապերը մեռան և թոյլ չտուին, որ ուրիշները ձեռք տան իրանց եկեղեցուն և

հաւատին։ Մեր եկեղեցին էլ նրանց չմոռացաւ և տօն նշանակեց, որ ամեն տարի բուն բարեկենդանի երեքշաբթի և հինգշաբթի տօնւում է։ Երեքշաբաթուայ տօնը նշանակուածէ այն հոգևորականների համար, որոնք Ս. Ղևոնդի հետն են նահատակուել և տօնն էլ կոչւում է Ղևոնդեանց նահատակութիւն, իսկ Վարդանի հետ ընկնող վկաների տօնը կատարում ենք հինգշաբթի, որ կոչւում է Վարդանց նահատակութիւն։

ՁԱՐԱԿԱՆ Ս. ՂԵՒՈՆԴԵԱՆՑ

Որք եկեալ հասեալ լինէին սեւագունտ զօրն Պարսից.
զի յափշտակեսցեն զառաջնորդս Հայաստանեայց զՍուրբ Ղեւոնդ։

Պարսից սեւագունտ զօրքը գալիս, հասնում էր մեր երկիրը, որպէսզի հայաստանցիներիս առաջնորդ Ս. Ղևոնդեաններին յափշտակեն (տանեն)։

Որք չուեալ գնացեալ լինէին ի պաշտօն անօրէն թագաւորին,
զի վկայեսցեն ճշմարիտ սուրբ Երրորդութեան սուրբ Ղեւոնդեանքն։

Սուրբ Ղևոնդեանները վեր էին կացել, գնացել էին անօրէն թագաւորին ծառայելու, որպէսզի վկայեն սուրբ Երրորդութեան ճշմարտութեանը։

Լուսաւորիչն ամենեցուն Ղեւոնդիէ Սուրբ վարդապետն
խոհական մեծ խորհրդով
խրատեալ՝ լցոյց զաշակերտեալսն. ծաւալեալ զլոյս գիտութեան
յոգիս արանց կատարելոց՝
կամաւոր յօժարութեամբ կատարեցան սիրով փրկչին։

Ամենին լուսաւորող Ս. վարդապետ Ղևոնդը խելացի և մեծ մտքերով խրատելով (աշակերտեալներին), տարածեց գիտութեան լոյսը հասակաւոր՝ կատարեալ մարդոց սրտերը, որոնք ի սէր Յիսուսի՝ կամաւոր կերպով նահատակեցան։

§. 24.

ԽԱՉՎԵՐԱՑ

Պարսիկների խոսրով թագաւորը Քրիստոսի ծննդից 614 տարի յետոյ Երուսաղէմ քաղաքն առաւ և Քրիստոսի սուրբ խաչը գերի տարաւ։ Բոլոր քրիստոնեաները խիստ տխուր էին այս բանի համար։ Բայց խաչի գերութիւնը երկար չքաշեց, որովհետև 15 տարուց յետոյ յոյների կայսր Հերակլը պատերազմեց Խոսրովի հետ, յաղթեց նրան և սուրբ խաչը գերութիւնից ազատեց։ Սրանից յետոյ խաչափայտը մաս-մաս արին և բաժանեցին բոլոր քրիստոնեաներին։

Երբ խաչը գերութիւնից ազատեցին, այդ օրուայ յիշատակը չմոռանալու համար՝ առաջին

տօն նշանակեցին, որ կատարւում է սեմտեմբեր ամսուայ մէջ։ Այդ օրը թափոր են անում եկեղեցւոյ շուրջը. խաչը բարձրացնում՝ վերացնում են և օրհնում են աշխարհիս չորս կողմերը։ Որովհետև օրհնելիս խաչը բարձրացնում՝ վերացնում են, դրա համար էլ տօնը կոչվում է Խաչվերաց։

ԶԱՐԱԿԱՆ Ս. ԽԱՉԻ

Ապաւինեցաք ի խաչ քո, արարիչ յաւիտենից,
Որ ետուր մեզ պահապան յաղթող ընդդէմ թշնամոյն.
Աղաչեմք սովաւ փրկիչ, պահպանեա զանմինս մեր։

Յաւիտենից Արարիչ յոյսներս քո խաչի վրայ ենք դրել, այն խաչի, որ մեզ յաղթող պահապան նշանակեցիր թշնամու դէմ. խնդրում ենք, ով փրկիչ, սրանով պահպանիր մեզ։

§ 25.

Եկեղեցու յիշը։ Հին ժամանակուայ քրիստոնեաները մեզ նման փառաւոր շէնքերով եկեղեցիներ չունէին. նրանք հաւաքւում էին մի հասարակ տան մէջ, շատ անգամ գետնափոր տներում և միասին աղօթում էին, իսկ աղօթքից յետոյ հացը կոտրում էին և բաժանում, յետոյ հաղորդւում էին։ Տան վերևի մասը փոքր ինչ բարձր էր. այստեղից էր քարոզում հովիւը։

Աւելի ուշ ժամանակներում աղօթատեղում՝ եկեղեցու միջին մասին նաւի ձև տուին, որ նշանակում էր, թէ եկեղեցին մի նաւ է, որի մէջ մտնողները՝ քրիստոնեաները նաւում են դէպի նաւահանգիստ՝ երկնքի արքայութիւնը. ոմանք էլ կլոր ձև էին տալիս։ Նաւի մէջ մտնելու իրաւունք ունէին միայն նրանք, որոնք մկրտուած էին, իսկ չմկրտուածները դաւթում—նաւի յետևում արևմտեան կողմում սիւներ կային վարագուրով միացրած, ահա այնտեղ էին կանգնում։ Երբ մկրտւում էին, այն ժամանակ իրաւունք էին ստանում նաւի մէջ մտնել։

Փոքր ինչ յետոյ նաւակի աջ և ձախ կողմերում երկու փոքրիկ նաւեր ևս որոշեցին և այսպիսով եկեղեցին խաչի ձև ստացաւ, որ մինչև մեր օրերը պահպանւում է։ Երբ քրիստոնէութիւնն ազատ կրօն դարձաւ, սկսեցին ամեն տեղ դեղեցիկ եկեղեցիներ շինել խաչաձև յատակագծով, որ ծագել է երեք նաւերի միաւորութիւնից։ Կլոր ձևն էլ մեր ներկայ գրքերթն է, որ եկեղեցու մէջտեղումն է։ Եկեղեցու սիւները միանում են կամարներով, որ երկինքն է յիշեցնում մեզ։ Եկեղեցու շինուածքը բաժանւում է երեք մասնի՝ դաւիթ, ատեան և բեմ։

ԳՈՒԼԸ—Այժմեան եկեղեցիները գաւիթ չունին, սա հին եկեղեցու այն մասն է, ուր կանգնում էին չմկրտուածները (երեխաները)։

ԱՓԵՆ—Այն տեղն է, ուր կանգնում են հոգևորականները։ Եկեղեցում հին սովորութեան համաձայն առաջ կանգնում են հոգևորականները, յետոյ տղամարդիկ, իսկ ամենից վերջը՝ կանայք։ Սեղանի աջ կողմի պատի մէջ աւազանն է, իսկ նրա դիմաց՝ ձախ կողմում բուրվառանոցը, որտեղ բուրվառներն են կախում։

ԲԵՄ—Ատենեց մի քանի աստիճաններով բարձր է։ Բեմի վրայ գտնւում է սեղանը, ուր պատարագ է մատուցւում։ Բեմիցն է քարոզում եպիսկոպոսը՝ աթոռի վրայ նստած։ Այստեղ իրաւունք ունին կանգնել հոգևորականները, կամ որոց իրաւունք է տրուած։ Բեմը սեղանից բաժանւում է վարագուրով։ Սեղանի վրայ հաստատուած է օծուած՝ խաչաձև վէմը։ Առանց այս քարին չի կարելի պատարագ մատուցանել։

Վէմ քարի վրայ շինած է Խաչակալը, որի աջ և ձախ կողմերում դռներ կան։ Այս դռների վրայ նկարում են Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների պատկերները, որոնք գըլխաւոր սիւներն են Հայոց եկեղեցւոյ։

Երկու դռների մէջ տեղում վէմ քարի վրայ երեք աստիճան է շինած, որոց վրայ դրած է ամենից բարձր խաչ, յետոյ Քրիստոսի պատկերը՝ (դաստառակ), իսկ վերջը աւետարան։ Աստիճանների յետևում Աստուածածնի պատկերն է՝ Յիսուսին գրգած։ Այս երեք աստիճանների վրայ դրած է լինում նաև սուրբ Միւռոնամանը և մասնատուփը։

Սեղանի աջ դրան կողմում՝ ներսից ընծայարանն է, որտեղ սկիհն են դնում։

Եկեղեցու հիմքի զանազան կողմերում դընում են առաքեալների, աւետարանիչների և Ս. Գրիգոր Լուսաւորչի անուաներով օծած քարեր—ընդամենը 16 հատ և ապա սրանց վրայ հիմն են ձգում, որովհետև քրիստոնէութիւնը սրանք տարածեցին ամեն տեղ—հիմնեցին զանազան տեղերում եկեղեցիներ և նրա հիմքը եղան։ Այդ քարերն անտաշ պիտի լինին, որ նշանակում է, թէ առաքեալներն ուսում չունէին և Սուրբ Հոգւոյ շնորքով էին քարոզում։ Քարերն առաջ լուանում են, որ նշանակում է մկրտել և ապա օծում են, որ նշանակում է դրոշմ։ Սեղանի վրայ է վեմ քարը—սա Քրիստոսի օրինակն է, որ իւր հիմնած եկեղեցու սուրբ սեղանի վրայ բազմած է։

Բեմի աջ և ձախ կողմերում երկու խորաններ կան—աջակողմեանը զգեստաւորուելու համար է, իսկ ձախակողմեանը՝ զգեստները պահելու համար։

Ձինուորիւնն աւարտելուց յետոյ եկեղեցին օծում են։

ՍՐԲԱԶԱՆ ԱՆՕԹՆԵՐ

Ս՛ԷԿ—Այն անօթն է, որի մէջ պատարագիչը գինի է ածում, հաց՝ նշխարհ դնում ու աղօթելով դառնում է Քրիստոսի իսկական մարմինն ու արիւնը։ Սկիհի բերնին դնում են մի ուրիշ անօթ, որի անունն է Մ ա ղ ղ մ ա։ Սկիհը շինում են կամ ոսկուց և կամ արծաթից։

Մ՛ԱՆԱՊՈՒՓ—Փոքրիկ տ ո ւ փ է՝ ոսկուց կամ արծաթից շինած, որի մէջ դնում են մ ա ս ը՝ կամ հաղորդը և երբ մինը յանկարծ հիւանդանում է կամ եկեղեցի չի կարողանում գալ, տուն են տանում և հաղորդում։

Մ՛Ի—ՈՆԱՄԱՆ—Նոյնպէս ոսկուց կամ արծաթից շինած մի ման, ըստ մեծի մասին աղաւնու նման. մէջն ածում են սուրբ միւռոնը և մկրտում երեխաներին կամ օծում պատկերներ։

Ք՛ՇԵՑ—Կոթը փայտից է, իսկ վերևի կլոր մասնի վրայ Սերովբէ և Քերովբէ հրեշտակա-

պետների պատկերներ կան նկարած, որ նշանակում է, թէ նրանք էլ սպասաւորում, ծառայում են պատարագի ժամանակ։

Բ—ՐՎԱ—Մէջը կրակ են ածում և վրան խունկ ծխում, որ նշանակում է, թէ ինչպէս որ այս խնկի ծուխը դէպի վեր է գնում, այսպէս էլ մեր աղօթքը, մեր խնդրուածքը դէպի վեր՝ դէպի Աստուած ենք ուղղում։

Խ՛ՉՎԱ—Նկարագրել։

ԶԳԵՍՏ

ա) ԴՊԻՐՆԵՐԻ ԿԱՄ ՏԵՐԱՅՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ։

Ձ՛ՊԷԷ—Գլխից մինչև ոտները՝ երկայն հասարակ՝ մաքուր շապիկ, որ նշանակում է, թէ ինչպէս արտաքուստ մաքուր է շորը, այսպէս էլ ներքուստ՝ սիրտը սրա նման մաքուր պիտի լինի։

բ) ՍԱՐԿԱՒԱԳԻ ՀԱՄԱՐ։

Ո—ՐՈՒ—Երկայն, լայն ժապաւէնի նման, որ ձգում է ձախ թևի վրայ։ Սա նշանակում է, թէ սարկաւագն աւետարանի լուծը դեռ ամբողջապէս չէ կրում, այլ՝ մասամբ, այն է ձախ ուսով։ Սարկաւագը հագնում է և շապիկ։

գ) ՔԱՀԱՆԱՅԻ ՀԱՄԱՐ

Քահանան երբ զգեստաւորուում է և պատարագ է մատուցանում, նշանակում է նոյնն է անում, ինչոր Քրիստոսն է արել: Պատարագի զգեստները նշանակում են Քրիստոսի կրած չարչարանքները: Քահանայի զգեստները սրբանք են:

Ճոպիկ—Երկայն, վզից մինչև ոտները, գոյնն սպիտակ: Սա նշանակում է 1, այն սպիտակ հանդերձը, որ Հերովդէսը հագցրաւ Քրիստոսին ծաղրելու համար. 2, Քահանային վայել է պատարագի ժամանակ սպիտակ հագնել, որովհետև քահանայի գործը հրեշտակի գործ է: Աւետարանիչը հրեշտակի շորերը սպիտակ է նկարագրում:

Գոտի—Նշանակում է այն խարազանը, որով Քրիստոսին խփում էին՝ սեանը կապած:

Բաղուն—Այն կապանքն է, որով հրէաները կապեցին Յիսուսի ձեռները Գեթսեմանում:

Փոր-բոր—Նշանակում է 1, այն կապանքը, որով Քրիստոսին սեանը կապեցին. 2, Աստուծու պատուիրանի լուծն է, որը քաղցր է և թեթև: Այս լուծը սարկաւագը ձախ ուսով է միայն տանում, իսկ քահանան և աջ և ձախ ուսով՝ ամբողջապէս:

Ճ-ըջաս—կամ Նոֆ-ըջ—նշանակում է կարմիր քղամիտը, որով ծածկեցին Քրիստոսին:

Սաղ-ըբ—նշանակում է այն փշեայ պըսակը, որ Քրիստոսի գլխին դրին:

Վաչաս—Ուսի վրայ է կրում քահանան. վրան նկարած է 12 առաքեալների պատկերը:

դ) ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԱՄԱՐ

Եպիսկոպոսն ունի այն բոլոր զգեստներն՝ ինչ որ քահանան:

Խոյր ֆամ Ռոֆ—Բացի դրանցից ունի խոյր կամ թագ, որ միևնոյն նշանակութիւնն ունի, ինչ որ քահանայի սաղաւարտը:

Եմֆոր—Կրում են շուրջառի վրայից, սա է յատուկ եպիսկոպոսական զգեստը:

ե) ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ ԿԱՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՄԱՐ:

Բացի քահանայի և եպիսկոպոսի զգեստներից, ունի նաև կոնքեռ, որը քառակուսի ձև ունի և կախուած է լինում գօտկից՝ ձախ կողմից և հասնում է մինչև ծունկը: Կոնքեռը՝ նշանակում է 1, այն գենջակը, որով Յիսուս աշակերտների ոտները սրբում էր. 2, հովուական մախաղ. 3, Սերովբէի բոցեղէն սուրը: Կոնքեռը կրելու իրաւունք միմիայն կաթողիկոսը ունի:

§ 26.

ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՐ

Խունկ մատուցանեմք առաջի քո տէր յօրինակ ըստ հնումն Զաքարիա։ Ընկալ առ ի մէնջ զխնկանուէր մաղթանքս, որպէս զպատարագն Աբէլի զնոյի եւ զԱբրահամու։

Խունկ ենք մատուցանում (աղօթում), քո առաջը հին եկեղեցւոյ Զաքարիա քահանայի օրինակի նման։ Ընդունիր մեր կողմից խնկանուէր մաղթանքը, Աբէլի, Նոյի և Աբրահամի պատարագի պէս։

Ողջոյն դուք միմեանց ի համբոյր սրբութեան եւ որք ոչ էք կարող հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ դրունս ելէ՛ք եւ աղօթեցէ՛ք։

Ողջոյն (բարև) տուէք մէկ մէկու սրբութեան համբոյրով և որոնք չեն կարող հաղորդուիլ Աստուածային խորհդից, թող դրան առաջը դուրս գան և աղօթեն։

Մի՛ ոք յերեխայից, մի՛ ոք ի թերահաւատից, եւ մի ոք յապաշխարողաց եւ յանմաքրից, մերձեսցի յԱստուածային խորհուրդս։

Ոչ ոք երեխաներից՝ (չմկրտուածներից) թերահաւատներից, ապաշխարանքի տակ եղողներից և անմաքուրներից (պղծերից) չմօտենան, այս Աստուածային խորհրդին։

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Արմ ССР
Ա. ԿՄ Գ. Մասիսյան

ՑԱՆԿ

§		Երես
1.	Անառակ որդի	5.
2.	Ողորմած սամարացու առակը	7.
3.	Որոմի առակը	8.
4.	Այգու մշակների առակը	9.
5.	Քանքարների առակը	11.
6.	Մեծատան և աղքատ Ղազարոսի առակը	13.
7.	Յիսուսի ծնունդը	14.
8.	Յովհաննէս Մկրտիչ	15.
9.	Յիսուսի մկրտութիւնը	18.
10.	Յիսուսի տաճար տանուիլը	19.
11.	Յիսուս մտնում է Երուսաղէմ	21.
12.	Յիսուսի խաչելութիւնը	24.
13.	Յիսուսի թաղումն և յարութիւնը	27.
14.	Քրիստոսի համբարձումն	28.
15.	Հոգեգալուստ	29.
16.	Ս. Ստեփաննոս Նախավկայ	30.
17.	Սաւուղի դարձը	32.
18.	Սանդուխտ կոյս	35.
19.	Ս. Գրիգոր Լուսաւորչի Խորվիրաբ մտնելը	36.
20.	Ս. Գրիգոր Լուսաւորչի Խորվիրաբից դուրս գալը	37.
21.	Ս. Սահակ Պարթև և Մեսրոպ մաշտոց	38.
22.	Թարգմանիչներ	44.
23.	Ատոմեանց Նահատակութիւն	44.
24.	Խաչվերաց	59.
25.	Եկեղեցու ձևը	60.
26.	Պատարագի երգեր	68.

395

0026835

2013

ԻՐ ԵՂԻՄԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Դասագիրք կրօնի - ուղեցոյց հայ կրօնաւոր-ցների համար, հին-ուխտի նիւթի մշակութիւն 1 ռ. 75 կ.
2. Դասագիրք կրօնի - ուղեցոյց հայ կրօնաւոր-ցների համար. նոր-ուխտի նիւթի մշակութեան ա, մասն . . . . . 1 ռ.
3 Մի քանի խօսք հայ կրօնաւորներին . . . 10 կ.
4. Սրբազան պատմութիւն հին ուխտի . . . . . 40 կ.
5. Սրբազան պատմութիւն նոր ուխտի . . . . . 40 կ.
6. Դասատետր կրօնի ա, տարի . . . . . 15 կ.
7. Դասատետր կրօնի բ, տարի . . . . . 20 կ.
8. Դասատետր կրօնի գ, տարի. . . . . 30 կ.

2. 3. 5. 6. 7. 8. գրքերից ցանկացողին, մեզ դիմողին, 10-ից աւելի օրինակ պնողին և կանխիկ վճարողին 20% զեղչումն կլինի

1. և 4. գրքերը իմ հրատարակութիւն չէ

Հասցէն 1. Тифлисъ, Священнику Сааку Саакянцу.
2. Центральную Книжную торговлю.